



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

f-20

244.

1012

8108

533

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆ.

PA
27534

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„Пусть пѣснь твоѧ кипитъ огнемъ негодованья
„И душу жжетъ своею правдивою слезой,
„Пусть ^{отъ твоихъ слезъ} ~~отъ твоихъ слезъ~~ ^и ~~и~~ найдутъ и честныя желанья
„И неслучайно ^и ~~и~~ дорогъ ^и ~~и~~ дорогой“ . . .
Надсонъ.



Տ. ԵԼԵՆԻ ԲԱԼՈՒՂԵԱՆ.

618



ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1890

Дозволено цензурою. С.-Петербургъ. 1890 г. 25 Августа.



1012-2013

181007

Типографія М. Бархударянъ, Газетный пер. д. Лянозова, Москва.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԱԾ

ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿ. Լ ՊԱՏՄԱԿԱՆ, ՄՈՒՐՃ Լ ԱՂԲԻՒՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.



ՓԵՐՊՐՈՎԻՑ.

(Նւէր ընկերոջս՝ Բ. Արղունեան-Երկայնաբազուկին.)

→  Մի՛ թունաւորիր դառն ծիծաղով
Նորաբաց գարունն քաղցրը յոյսերիս...
Սիրոյ արշալոյս նաշխուն գոյներով
Դեռ նոր է ծագել իմ մասաղ սրբախ:
— «Կեանքը ճահիճ է—աղտերով լեցւած...
«Գոլորշիներով օդը վարակւած...
«Խաւար է—կ'ըսես—մառախուղ սաստիկ
«Եւ բախտը միայն երազ խաբուսիկ»...—
Փոյթ չէ՛... մի՛ ջարդիր անուշիկ ցնորքներ.
Դեռ շատ է երկար իմ ընտրած ճամբան.
Անկասկած հողմը մահաշունչ ձմրան
Կըմեռցնէ մի օր իմ կոկոն վարդեր...



ԼՍՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ. *)

Երբ որ Աստուած ստեղծեց աշխարհ—
Նրնչաւորին, անշընչին—
Նա բաժանեց պէս-պէս բարբառ,
Միտք յայտնելու ամենքին:
Բայց այդ լեզուք արտայայտել
Ձէին կարող «երկնայինն» .
Տէրն էր նոցա նըշանակել
Մեր առօրեայ պէտքերին:
Զրգիտէին ստեղծածները
Մի ձև, մի դարձ ձայներից,
Որ կարենար զգացւածները
Պատշաճ յայտնել սրբտերից:
Այդ պահանջը էր հոգեկան
Մի պէտք—բարձր միւսներից—

*) «Էստոն. առաս.» Թարգմանումին չէ «անյայտ հեղինակից»,
ինչպէս սխալմամբ յայտարարել էր պ. Արասխանեանը.—դա ինքնու-
րոյն գրածը է: «Մուրճի» մէջ տպագրուեց այս կտորը սարսափելի
աղաւաղած—«գլուխը ոտների և ոտները գլխի տեղ», ինչպէս ասում
են, շնորհիւ գրաշարների անհոգութեան: Բացի այդ պ. Արասխանեանը,
իբրև «Մուրճ» ամսագրի խմբագիր, շատ տեղեր փոփոխել էր ուղ-
ղելու դիտաւորութեամբ:

Եւ կենդանիք հաւաքուեցան
Խընդրել այդ «բանն» Արարչից:
Դա մի դաշտ էր, դաշտ լայնարձակ,
Եղեմական բոյսերով,
Ուր ժողւեցան և մարդ, սոխակ,
Ձեռուն, զագան խմբերով:
Եւ բոլորը խոնարհեցին,
Որ աղօթէն առ Աստուած...
Նոքա այդ «բանն» անւանեցին—
«Թարգման սրբտին վշտացած»:

* * *

Յանկարծ օդում հընչեց մի ձայն,
Օտարոտի մի աղմուկ...
Ակկորդները թռւան, սլացան...
Տիրեց ճրնշող մի անձուկ:
Հանդիսականք—լուռ ու լալկան—
Ապշած իրար նայեցին.
Նոքա երբէք նրման մի ձայն
Ձէին լսել բընաւին:
Դա երգերի սուրբ հրեշտակն էր,
Որ իջնում էր երկընքից...
Ամբողջովին նա փայլում էր
Իր լուսեղէն շրջանից:
Ամպի սպիտակ քուլաները
Պատել էին անմահին

Եւ նա ոսկէ իր թւերը
 Տարածել էր չորս կողմին:
 Եւ լըսում էր ողջ բընութիւն
 Քաղցրահընչին հրեշտակին...
 Անսովոր մի անդորրութիւն,
 Կարծես, պատեց ամենքին:
 Լուռ էր անտառ, լուռ էր գետին
 Եւ լեռնային առուներ...
 Լուռ էր ծովը, այն ահագին,
 Եւ մարդ, սողուն, թռչուններ:
 Չարածըձի արձագանքը
 Միմոսութիւնն իր թողեց
 Եւ ծառերի խիտ արանքը
 Մըտաւ ու լուռ պըպըզեց:

*
 * *

Իսկ նա ձայնը իր երկնային
 Հաղար ու մի տեսակով
 Սըլացնում էր յանկարծ ուժգին
 Կամ քընքշացնում մեղմ տօնով:
 Ձեռքումն ունէր երեքլարեան
 Փըղոսկըրեայ մի քընար—
 Նա խըփում էր մատով վերան,
 Ձայն էր հանում անդադար:
 Եւ այդ երգը ոլորում էր,
 Յանկարծ ողջում, հեկեկում,

Սըրտածըմէկ թըլպըլտում էր—
 Կարծես, կապած շղթայում:
 Նա յուսահատ կամ անցնում էր,
 Ասես, մէկին փընտռելով...
 Խըռպոտ ձայնով մերթ կանչում էր
 Կորած եարին վայ-վոյով:
 Ամբողջ կեանքը բազմակողման —
 Պատկերներով խառնիխուռն
 Նըկարւած էր մէջը կենդան—
 Զգացմունքներով հանդիստ, բուռն:
 Եւ մանուկը, երիտասարդ,
 Եւ ալեղարդ ծերունին
 Իրանց հայեացք, սիրտ, միտք ու դարդ
 Շընչել էին այդ երգին:

*
 * *

Երբեմն ձայնը ուրախ, ղըւարթ
 Թըռչկոտելով, խայտալով,
 Դիմում էր դէպ հեռւի այն վարդ,
 Որ բուրում էր քաղցր հոտով:
 Եւ այդ երգին ականջ դնելով,
 Կըտեսնէիք մանուկին,
 Որ, թիթեռին հետեւելով,
 Քըշում էր իր փայտէ ձին...
 Նորա կայտառ լըլըւոյը,
 Որ դարձրած էր թիթեռին,

Կ'հանէր կրօնքից խոր հողուոյը
 Ձեր նոյն մատաղ հասակին.
 Դուք զմայլում էք, հանգըստանում,
 Անմեղ մանկան նայելով,
 Երբ խընդում է, զըւարձանում,
 Թիթեռնիկին փախցնելով:
 Ահա, կարծես, ձայնը յուզւեց...
 Հեռու, հեռու սրլացաւ...
 Որոտալից մի «սխ» լըսւեց,
 Լի ցաւերով—բիւր, անբաւ:
 Եւ այդ նօտան բարձրանում էր,
 Բուռն զգացմամբ սաւառնում...
 Եւ նա քիչ քիչ խըլանում էր
 Աստեղց, լուսնի աշխարհում:
 Կարծես, թէ նա բողբոլում էր—
 Անբաւական նեղ կեանքէն...
 —«Ազատ օդ... օդ... ազատ հովիւր
 «Եւ մահ անխիղճ ոտխին»...
 Նա ձըգտում է իդէալին—
 Կարմիր դոյնով նըկարած—
 Որ հեռու է, մօտ է ամպին...
 Ճամբան զըժուար, փուշ բուսած:
 Եւ պատանին, բոլոր ոյժը
 Լարած, կ'ջարդէ կապանքներ.
 Նա չէ կորցրել դեռ իր յոյսը,
 Դեռ չեն սառել երակներ:

Բայց թըշնամիք բիւր են թըւով—
 Խանդարում են, հարւածում—
 Իսկ նա, վառւած, լի տենչանքով,
 Իր վէրքերը չէ աեսնում:
 Հըսկայական մեծ քայլերով
 Նա վազում է շընչասպառ,
 Տանջւած կուրծքը դէմ անելով—
 Քար ու նետից կարկտահար...
 Յանկարծ երգը լըռեց, դադրեց
 Մի խոր, անհուն, մեթ ձորում...
 Մարեց... չըկաց... չիցէ խեղդւեց
 Ձորի խոնաւ յատակում...

* *

Բայց ո՛չ ահա կըրկին լըսւեց
 Դիւթիչ երգը, ալկորդներ—
 Սակայն մեղմ ու հանգիստ հընչեց
 Նա իր վերջին այդ տողեր:
 Ձէին բուռն—առաջայ պէս—
 Այդ հընչիւններն թըռչելով...
 Նոքա դաշտի դետի մը պէս
 Հոսում էին անվրդով:
 Նոքա չէին էլ նըմանում
 Կրակոտ, անվախ պատանուն...
 Հանդարտ էին, չէին շտապում,
 Նըման եփւած ծերունուն:

Հըրճւում էին բնութեան շուքով,
 Տէրին սաղմոս երգելով,
 Կընդրուկ ծըխում, խոնարհւելով,
 Ճըշմարտութեան անունով:
 Գեղեցկութեան սուրբ սեղանին
 Դափնիք էին զոհ բերում...
 Սիրոյ սերմը ցանում էին
 Իրանց մշակած արտերում:
 Եւ այդ վերջին անգորր էջեր
 Բուրում էին մեղմ զգացմամբ...
 Կարծես, սիրտը սրբւեամբ լինէր
 Խելքի սառը քընտութեամբ:

* *

—«Սա երազ է» — հարցնում էին
 Լուռ, աչքերով միմեանց,
 Երբ մեղեդին ոգու վերջին
 Հանգաւ դողդոջ մէջ լեւանց:
 Երկար բոլորն մընջւած այսպէս
 Նայում էին ամպերուն,
 Ուր նա ծածկւեց ընդ միշտ, կարծես,
 Կախարդելով ողջ բնութիւն:

* *

Այնուհետեւ ամեն մի բոյս,
 Ամեն մի թոյլ արարած

Երգել ըսկսեց, երբ մէջ անյոյս
 Դրութեան կ'լինէր ընկճւած...
 Այդ երկնային սուրբ պարգևից
 Վերցրին ամենքն մի ջոկ ձիւղ...
 Հողմը մըտքում շատ պինդ պահեց
 Նրա դռոցը աներկիւղ...
 Յըստակ աղբրին խիստ դիւր եկաւ
 Երգի ուրախ կարկաջիւնն...
 Տերեւաշատ կաղնին առաւ
 Ոգու շորի մեղմ շըշիւնն...
 Բուն յօրինեց մի սրբառառուչ
 Սուգ առ անբախտ իր վիճակն...
 Սոխակն սրբեց փոքրիկ կընդուշ
 Որ ըսկըսէ դայլայլին...
 Միայն ձուկը չէր այն դաշտում
 Ոգու երգած բոպէյին...
 Խեղճը զըրկւեց, մընաց ջըրում,
 Որ չըխեղդւի մէջ օդին:
 Իսկ մարդկային խորունկ սիրտը
 Լըցւեց «ամբողջ» այդ երգով...
 Նա հիմա էլ իրա դարդը
 Կերգէ, ոգուն նմանելով...



ՆԵԿՐԵՍՈՎԻՑ.

(Նւէր իմ սիրելի Պապաջանին.)

Աշուն է խորին. ծիծեռը թռաւ.
Հընձևորի գործը վաղուց վերջացաւ.
Դաշար ամայի. անտառը գեղնած.
Երկինքը մըռայլ մըշուշով պատած:
Եւ մի արա միայն չըհընձած հեռում
Մընում է անտէր, կարծես, որբացած...
Լիքը հասկերը խըշշում են տըրտում,
Բողբում անխօս, զըլխակոր թեքած...
— «Էլ ի՞նչ է սպասում, ինչու չէ՞ դալիս,
«Յողնեցիներ, երկար սպասելով նորան...
«Մինչև ե՞րբ, ախար, առանց կարեկից
«Տանենք անմըռունչ ծաղրանքը աշնան:
«Ձարդում է քամին մեզ օր ու գիշեր,
«Յիր ու ցան թափում հասուն հատիկներ...
«Անձրեւը թըրջում, աղաւը լափում,
«Վախկոտ նապաստակն անգամ կոխտտում...
«Եւ ինչո՞ւ թողեց նա մեզ սե օրին...
«Միթէ՞ մոռացաւ, որ աշուն է խորին...
Հողմը սուլում է տըխուր պատասխան.
— «Ձեր տիրոջ ղյժերն վաղուց սպառեցան»...

ԼԵՌՆՑՈՒ ՀԱՅ ԱՂԶԱՆՑ ԵՐԳ.


Բաֆֆիի «Սամուէլից».

Պա մի երգ էր, երգ լեռնական,
Լեռնցի աղջիկ էր երգում—
Եւ թըռչում էր երգը նըման
Հըպարտ արծէին ամպերում:
Նա զենւած էր, զոսհաւորած,
Ինչպէս աղնիւ իշխաններ,
Եւ լերբ պարսիկն կընկներ խոցւած,
Թէ մօտ գընալ խիզախէր:
Բնութեան կոյսը մերթ զօվում էր
Իր հայրենեաց հովիտներն,
Կամ զըրկում էր, սըլանում էր
Ձեփիւռի հեռ գէպ սարերն:
Մերթ աղջիկը նըլազում էր
Մուրթ անտառի մեղեդին,
Ուր հինաւուրց կանաչում էր
Իր թռուներով եղէին:
Յանկարծ ձայնը մեղմանում էր,
Ծաղկանց հետք փըսփըսում,
Երբ, կարմրելով, որոնում էր
Սիրած եարին զաշտերում:

Բայց տե՛ս, ահա՛ սաստկանում է
Քարափներում թափառում..
Աւանդ, յանկարծ նա զիպչում է
Ապառաժին ու լըռում..

*
* *

Կարծես, հէնց այժմ—պարզ ու զրաւիչ —
Դեռ հընչում է ականջիս
Դիւցադնուհու երգը դիւթիչ,
Զօրեղ ձայնը անտառից:
Կարծես, հէնց այժմ՝ յափըշտակած
Դեռ լըսում եմ մեղեդին
Եւ նայում եմ, նայում ապշած,
Յաւերժական քաջ կոյսին:
Եւ այն խրոփսա թուխ-թուխ գէմքից
Ինչքան հռանդ էր փայլում..
Սիրած հարին սեւ աչերից
Որքան սէր էր խոստացւում:



ԱՂԹԻՐ ԱՄՆԻՔԻ ՀԱՄԱՐ.

Վիկտոր Հիւզօյից.

Աղթի՛ր, մանուկ,—գիշեր է հանդարտ,
Պայծառ եթերում լողում է լուսին..
Մնդորր է տիրում մարդկանց սրտերին.
Նընջում են այնտեղ տառապանք ու դարդ:
Եւ ահա՛, երբ մենք, անմիտ հրապուրւած,
Երգում ենք բարձր ուրախ խընճոյքին,
Երեսան ձեռքերն, խաչաձև դարսած,
Թոթովում է հիմն երկնից Արարչին:
Ո՛չ դառն արցունք, ո՛չ բողոք, դանդառ..
Նա միայն բախտ է խընդրում ամենքին..
Իսկ յետոյ զըւարթ, սրտով անարատ
Կընընջէ մանուկն մայրիկի ծոցին:
Հրաշալի տեսիլք, քաղցր երազներ
Կ'երեւան նորա փոքրիկ աչերին.
Պահպան հրեշտակն կըպատմէ զըոյցներ
Եւ օր-օր կ'երգէ բարի մանուկին:

*
* *

Աղթի՛ր, մանկիկ, մայրիկիդ համար..

Շատ անգամ չէ՛ ո՞ր մայրըդ ուժանդամ

Ջ. Բալուդ. Բանաստ.



Քեզ օրօրում էր, քեզ զրգւում, հաղցնում
 եւ թաց աչերիդ արցունքը սրբում:
 Նա իր աղօթքում քեզ Տէրից խնդրեց,
 Նա քեզ երկրնքից իջեցրեց երկիր..
 Նա իր զգացմունքը, իր քաղցրը յոյսեր,
 իր միակ տենչանքն քո մէջ ամփոփեց...

*
 * *

Աղօթի՛ր և իմ, ծերունուս մասին.
 Քո թոժովանքը թանգ է ամենից...
 Նա պարզ է, անմեղ, խտակ է բնաւին,
 Նա չի՛ ճաշակել դեռ կեանքի թոյնից:
 եւ քո աղօթքը դեռ չի ճանաչում
 Ո՛չ կեանքի հոգսը, ո՛չ տանջանք, վըշտեր—
 Սուտը, նախանձը, լըկտի վարմունքներ,
 Չարութեան սերմը չեն նորան կեղտում:

*
 * *

Ես կրուում էի—ես գիտեմ տանջանք.
 Մազըս սպիտակեց այդ կրուումն ահեղ...
 Այնտեղ փորձեցի, որ բախտն—զառանցանք,
 եւ փառք ու պատիւն—բառեր են անմեղ...
 Հանդիստ է ինձ պէտք այս դառն կեանքից.
 Ուրեմն աղօթի՛ր գիշերւայ պահուն
 եւ ասա՛, խնդրի՛ր ճրնկաչոք երկնից
 Միայն—«Տէր, զըթա՛, ներիր ամենուն»—

*
 * *

Անկեղծ աղօթքը հաճոյ է Տէրին.
 Կըլնա՛է Նա միշտ խնդիրքը մանկան...
 Զոկ-ջոկ ճանապարհ երկրիս երեսին—
 Հաւատս ծերիս—ունէ՛ ապեն բան:
 Բոլոր վըտակներն դէպ ծովն են վազում,
 Մեղուն գիմում է հոտաւէտ ծաղկին,
 Արծիւը—ամպերն, դեր—խաւարին,
 Իսկ մանկան աղօթքն երկինքն է թըռչում:

*
 * *

Երբ քո բառերը վերե են սլանում,
 Թեթեւանում եմ, կարծես, վըշտերից—
 Այդպէս ճամբորդը շքեղ հովիտում
 Կ'իջեցնէ բեռը յոգնած ուսերից:
 Սիրտըս լըցւում է զարձեալ յոյսերով.
 Կորչում են, կարծես, իմ բոլոր հոգսեր.
 եւ մի վայրկեանում քո սուրբ աղօթքով
 Չըքանում են իմ դառնալից մըտքեր:

*
 * *

Աղօթի՛ր նոյնպէս թըշառի մասին,
 Որին ճընշում է բախտը կուրօրէն...
 Այն կորած մարդու, որ ճահճի միջին
 Անբարոյական խեղդում է անգէն,—

Որ այն սուրբ ժամին, երբ առաւօտեան
 Կոչում է զանգը «փառք» ասել Տէրին,
 Նա ընկած զիրկը արբեցողութեան
 Մուացել է բնաւ կոչումն մարդկային...
 Յիշէ՛ր և անմեղ կոյսերին նոյնպէս...
 Մութը բանտի մէջ շրջապաճներին
 Եւ խոստրմնազանց կնոջն աներես,
 Որից գազւած է խաբւած ամուսինն...
 Յիշէր, ով մանկիկ, և նոցա անունն,
 Որոնք պառկած են նեղլիկ շերիմում,
 Որ կորցրին հողւոյ ոյժը, թարմութիւն,
 Միշտ մաքառելով հոսանքի զիմում:
 Այնտեղ քարի տակ, սև հողի միջում,
 Կան նոյնպէս վըշտեր—ասա աղօթքում—
 Նոքա տանջւում են... պիտի՛ բշտապել,
 Մեղքերի բեռնն տակիցը փրկել...
 Մանկան աղօթքը մեռած ու կենդան,
 Մեղաւոր, թըշտո մարդկերանց մասին
 Կըթըռչէ երկինք կընդրուկի նրման,
 Կըծըխէ բուրմունք Տիրոջ աթոռին:

*
 * *

Իսկ դու, պահապան-հրեշտակ անարատ—
 Իմ երեխայիս բարեկամն հաստատ—
 Փրուիր լուսափայլ թևերդ վերան
 Եւ հըսկիր կեանքը, նորա ապագան:

Աղատի՛ր դու միշտ ամեն փորձանքից...
 Քայլ տա քայլ հասցրու, մօտեցրու բախտին...
 Նա միամիտ է, կըշեղւի ճամբից—
 Բարին կըթողի, կըզիմէ չարին...
 Եւ այդ հրաշալի քո ներկայութեամբ
 Ամբարշտն անգոր իմ մանկան հողին,
 Իսկ քո երկնային վըսեմ ներշնչմամբ
 Ցանկի՛ր սըրտումը անպորր եղիմին. . .

«Ն Ը Ի Ը Կ Ի»

(Միայն) հեղինակին—Լ. Ման-ին.

Արդեօք եղել ես անքուն գիշերով
Միայնակ պառկած քո կոշտ անկողնում...
Պատահե՞լ է քեզ գաղտնի ցաւերով
Տառապած փակւել խաւար սենեակում:
Գուցէ պատահած լինի, որ արթուն
Նըստես սեղանիդ առաջ տաղտիւթեամբ,
Սեղմես ճակատդ տարածում պահուն
Ափերիդ մէջը բոլոր զօրութեամբ:
Եղե՞լ է արդեօք, որ դու զառանցես,
Անէծքներ թափես գունատ շըրթունքից,
Քո ոչնչութիւնն բացորոշ տեսնես,
Զըզրանես մի ելք այդ խոր անդրնդից:
Եւ այդ ժամանակ փետե՞լ ես մտղերդ.
Յուսահատ ջարդել փայտացած մատներդ,
ձընչող ու խեղճող զգայմունքը կըրծքիդ,
Թունալից միտքը պրօւող ուղեղիդ:
Գուցէ ցընցե՞լ ես, ցատկել աթոռից,
Գրժւած վազվըղել անկիւնից անկիւն...
Կարծես, անլեզու, մութը խորշերից
Սպասելիս լինես միակ փրկութիւն:

Իսկ այնտեղ զըլխումդ արագ պտրտումով
Գործում է ուժգին, դարկում ճակատիդ
Այն մըռայլ հարցը մըռայլ դոյներով,
Իր սպանիչ թոյնը թափելով սրտիդ:
—«Ինչո՞ւ—կըրկնում ես անդիտակցաբար,
Խեղդւած մի ձայնով դիմելով պատին—
«Ես այդպէս չէի վըճռել, ախար,
«Երբ զըօսնում էի ծովի ափերին:
«Այնտեղ նըպատակ դրեցի հասնել
«Հեռում երևող սքանչելի լոյսին,
«Հոսանքի հետը անվեհեր կըռւել
«Եւ հասնել անշուշտ տենչալի կէտին...
«Բայց ինչո՞ւ յանկարծ դեռ ճամբի կիսում
«Անորոշ կանգնած նայում եմ հեռին...
«Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ չեմ թիափարում,
«Որ հասնեմ շուտով ցանկալի ափին...»—
Հոսանքը կաողած խըփում է նաւիս.
Ունում է իմ դէմ, ըսպառնում ալիք.
Ծովը ահագին—փրուած առաջիս...
Իսկ ես... միայնակ, մի մըրջեւն փոքրիկ...

Հ Ի Յ Ն Ի Ի Ց.

«Es fällt ein Stern herunter
«Aus seiner funkelnden Höh'...»

Մի աստղ շեղւեց իր ճամբից,
Ընկաւ պայծառ երկընթից.
Դա հէնց սիրոյ աստղիկն էր,
Որ վերեւից զլուրւում էր:
Խընձորենուց թափւեցին
Շատ կոկոններ ու տերեւ.
Վերայ հասաւ չար-քամին,
Ըսկսեց ծաղրել ու տալ ցրեւ:
Կարապն լըճում երգում էր, *)
Մերթ զուրա լողում, մերթ սուղում...
Երգը կամաց մարում էր,
Վերջը խեղդւեց ջրերում:
Լուռ է այժմ ու մըթին.
Տերեւ, կոկոն ցիրուցան.
Աստղը հանգած բընտւին.
Երգը դադրած յաւիտեան:

*) Կարապը իր ամբողջ կեանքում միայն մի անգամ է երգում, այդ էլ լինում է մահւան ընկալելու: Այստեղից են — «лебединый пѣснь», «Schwanengesang» (կարապի երգ) — դարձածքները, որ նշանակում են մահամերձ վերջին մի «լեղ», որին հետևում է իսկոյն վախճանը:

Հէյնէն այստեղ նկարում է մահւան պատկերներ:

ՄԵՆԿԵՆ ՊԵՏԵՐԶՄ.

(Նւէր մօրս — Ելենէ Բալուդեանին.)

Պ Ա Տ Կ Ե Ր.

Պա մի պատկեր էր — անցած, մոռացած —
Հեռու օրերից — վաղուց չըքացած...
Դա մի զիպւած էր մութըն անյեալից —
Երազանքման մանուկ հասակից:
Ես երկար այնտեղ պըտըրաւում էի
Եւ կանչում ինձ մօտ ծանօթ ըստերների,
Դառն, յուսահատ արտասւում էի,
Երբ չէին ցըրւում միզապատ ամպեր:
Այդ անխիղճ ամպերն շրջաւրջի նրման
Սքողել էին սիրելի զէմքեր
Եւ չէին թողնում, որ իմ մանկութեան —
Իմ կարօտալի — երեւան վայրեր:
Անորոշ հեռւում երբեմն միայն
Ցրցւում էր մի թումբ, տսես, զերեզման...
Կիսաջինջ գիրը մամռապատ քարին
Դեռ չըշնջում էր մի անուն անպին. . .

*
**

Բայց ահա՛ քիչ քիչ պարզւում է եթեր
եւ ձեակերպւում մի անմեղ պատկեր.
Բակը ու այգին, ուր խաղում էի,
Ուր քրոջըս հետը մարտնչում էի...
Վառարանի մօտ փոքրիկ անկողին,
Ուր ես ու Մարօն երկար տարիներ,
Գրեկած մեր մրուսն, խորամանկ կատւին,
Բըլբըլում էինք մինչ խորին գիշեր:
Սրեգակը նոր ծագած էր լինում
եւ Մարօն արդէն ոտքի էր ելնում...
Իսկ ես դեռ երկար փափուկ անկողնում
նորանոր խաղեր էի երազում:
Զարթնում եմ ահա՛, աչքերըս տրորում:
Հայրըս, սեղանի առաջը նրստած,
Մըմսախոհ ինչ որ բան է խրվիւրդում...
Մայրըս կարում է, զըլուխը թեքած.
Իսկ ինքնաեռը սուլում է, փրշում
Ու բարակ ձայնով «բայաթի» ասում:
—«էյ, Մարօ, թող ձիս, թէ չէ, խօս՛ գիտե՛ս» —
Գոռում եմ քրոջըս — վերմակի տակից...
—«Տօ՛, չար-օյինբաղ, տեղեցըդ իջեր
«Ու յետոյ ձիուդ դաւին ըսկըսի՛ր» —
Նկատում է հայրըս ու դարձեալ զրրում,
Իսկ քոյրըս ձիուն դէս-դէն է քըշում...

*
**

Հագնւում եմ վրձազ, ցատկում անկողնուց,
Մարօյի ձեռքից աղատում ձիուս...
Նա թէպէտ փոքր էր ու թոյլ կազմաճքով,
Բայց դիմադրում էր բոլորն եռանդով...
—«Ա՛ռ, թէյըդ խմի՛ր» — ասում է մայրըս,
Տալով ինձ փոքրիկ գոյնըզգոյն թասը...
—«Ե՛կ, Մարօ, դրնանք, տուն շինենք այգում» —
Բայց Մարօն լուռ է, չի պատասխանում...
Երևի, դո՛հ չէր իմ կոշտ վարմունքից,
Ուստի երեսը դարձրեց ինձանից...
—«Դէ՛, լաւ է, դրնանք... ձիս էլ քեզ կրտամ.
«Մայրի՛կ, ասա՛ — դայ, ձին իրան կրտամ» —
Վերջապէս մի կերպ նա համաձայնեց.
Մի քանի ժամով մեր դաշը կապեց,
Մենք խաղաղութեամբ պիտի տուն շինենք,
Կրօիւ, պատերազմ չլպիտի մըղենք:

Մեր բակի վերջում ձրգւում էր այգին
Լայն ու սուերախիտ ծառուղիներով.
Գեղեցիկ էր նա կէսօրեայ ժամին,
Երբ ո՛չ մի տերեւ չէ շարժում քամին:
Եւ կանաչ խոտը, որթը խաղողին,
Կ'ասես, արբոտած նիրհում են սօթում...
Սյգպէս թուլամորթ տաճիկն հարէմում,
Ափիոն խրմած, հանդգում է բարձին...

*
* *

Եւ Մարօ, և ես զեռ խաղաղ, լըռիկ
 Ըզրաղւած էինք շինութեան գործով.
 Շուտ կառուցւեցան արները փոքրիկ,
 Բայց թըշնամական, սպառնալից զիրքով:
 Եւ, իրաւ, մեր զաշն երկար չըսեցեց.
 Ես գաղտագողի յարձակում արի—
 Եւ քրոջըս ամբողջ շէնքը տւերեց...
 Խեղճը ջանք արաւ, որ ինձ զիմապրի,
 Բայց, աւանդ, յաղթեց... զոռաց ու վաղեց,
 Սոսկալի զէպքը մայրիկին պատմեց...
 Նա արտասուալից հաստատեց փաստով,
 Որ ես վարեցի անազնիւ կերպով,
 Որ ընդդէմ կապած մեր զաշնակցութեան—
 Վաւերացրած մօրս բարձրագոյն լռութեամբ—
 Անըսպասելի ես յարձակեցի
 Եւ վայրենաբար տունն տւերեցի...
 Մայրիկը նորան հանդարտացրեց
 Եւ խելօք մընալ ինձ խիստ պատուիրեց...
 —«Սիրտըդ հովացան... գանգաւըդ արթնր...»
 «Դէ՛, հիմա զընանք—բերդըդ նորոգիր...»—
 —«Բա՛, որ զու էլի դաս ու քանդուե՛ս...»—
 Յայտնում էր Մարօն ինձ վախ ու կասկած...
 —«Ա՛յ, էն երկինքը... վրկայ է Աստուած...»—
 Երգւեցի ես պինդ և զաշը կապեց:

*
* *

Գարնան առաջին օրերից մէկն էր.
 Դեռ նոր էր փրթթում մերկացած այգին.
 Կարմիր ու կանաչ, զեղին կոկոններ
 Նոր էին բացւել զարթնած ճիւղերին:
 Մի տեսակ քրնքուշ ու նուրբ թարմութեամբ
 Լի էր և օդը և ամբողջ այգին.
 Հարաւին յասուկ անուշհոտութեամբ
 Շոյում էր բնութիւնն ու մեղմում մարդին...
 Կապոյտ երկընքում մանուկ արեգակ,
 Զրման կապանքից զեռ նոր փրկւելով,
 Աւելի բուռն, աւելի անյադ
 Գըրկում էր երկրին տաք ճաճանչներով:
 Սոխակը կըրքոտ, վառվըռուն սըրտից
 Թափում էր սիրոյ բառեր ըզձալից...
 Վարդը ամօթից կարմրել էր բնաւին,
 Թէև լըսում էր հաճութեամբ ներքին...
 Թըռչում էր առուն, ցայտում ափերից
 Եւ ինչ որ պատմում վըրդովված ձայնով...
 Մանրիկ թիթեռներ մանրիկ թւերով
 Սըլանում էին իրար յետեւից...
 Ծառերը ուրախ արտասուում էին,
 Ազատիչ գարնան զալուսան օրհներով...
 Բիւրաւոր թըռչունք ծըլըլում էին,
 Տիրոջ անունը փառաբանելով...

* *

Բայց ահա՛ և մեր գործն էլ աւարաւեց.
 Երկու հակառակ բանակներ կազմեց.
 —«Իմը շինեցի», — «ես էլ վերջացրի», —
 Այդ էր նախաբանն երկու կողմերի...
 —«Արի՛ դու թուրք դառ, ես էլ հայ դառնամ...»
 «Կըռիւ է, ասե՛նք... Մարօ, ուզո՞ւմ ես...» —
 Առաջարկեցի մի քանի անգամ...
 —«Ե՛կ, կըռիւ քրքե՛նք... դէ՛հա, ուզո՞ւմ ես...» —
 Մարօն կըմկըմայ, բառերը ծամեց.
 Վերջն, ամաչելուց — համակրանք յայտնեց.
 Կըռիւք քարով երկու բանակից
 Պիտի ըսկըսւի — խորհուրդը վըճռեց...

* *

Նըշանը տըրւաւ. քարերը թըռան
 Եւ դեռ անվընսա դէս ու դէն ընկան.
 Ճակատամարտը սաստիկ զոռող էր,
 Չըկային թէպէտ դեռ ըսպանւածներ...
 Պատերազմական հին սխաւեմային
 Աւելի հըմուտ, տեղեակ լինելով,
 Ահ էի սըփռում թըշնամու սըրտին
 Բարձրաձայն զոռում ու զոչումներով:
 Անգործ ճընձղուկներն հետաքըռքըութեամբ
 Նըստոտել էին մօտակայ ծառին

Եւ վայր ի վերոյ քըննադատութեամբ
 Մաղըում էին մեր «կըռւասէր հօգին»...

* *

Հակառակորդըս լըռիկ ու մընջիկ
 Նետում էր դանդաղ — ո՛չ հեռու քարերն —
 Իսկ ես անդադրում — ստէպ ու ուղղաձիգ —
 Ռըմբակոծում էի թըշնամու շարքերն...
 Առաջուց էի իմ բանը տեսել —
 Երկու զրուպանքս քարերով լըցրել —
 Մարօն երբեմնն ստիպւած էր լինում
 Նետելու տեղը քարեր որոնել...

* *

Յաղթութեան բախտը իմ կողմն էր հակումում.
 Թըշնամիս, կարծես, յեա-յեա էր քաշում.
 Մակայն օ սարսափ... մի ձիջ լըսւեցաւ...
 Եւ զօրապետը գեանին փըռւեցաւ...
 Մարոյի գըլխին մի քար էր դիպել...
 Արիւնը վերքից ըսկըսեց հոսել...
 Ես մօտ եմ վազում ու գըրկում նորան,
 Ջերմ համբուրելով ճակատն ու բերանն...
 Աշխատում էի շուտով լըռեցնել
 Եւ գործը մի կերպ մայրիկից ծածկել...
 Բայց երբ ջանքերըս ի դերեւ ելան,
 Ես էլ ըսկսեցի ձայնակցել նորան...

* *
*


Եւ այդպէս դեանին փառաւոր ձրդւած,
 Հեծկըլտում էինք ձայն-ձայնի տըւած...
 Մարօն լացում էր—արնի պատճառով,
 Իսկ ես և արնի, և պատժի յուսով...
 Բայց շուտով մեր այդ սուգ ու շեւանին
 Մայրբս ու հայրբս հասան, վազելով...
 Խեղճ՝ վերաւորին վերցրին շուտով
 Ու տարան, դրին անկողնի միջին...
 Իսկ ինձ—յաղթողիս—վըճուեցին թողնել
 Այդ օր առանց ծաշ մինչ իրիկնագէմ
 Եւ, բացի այդ, պինդ ականջս ձրգել,
 Որ հայ ու թուրքին չըկըսւայրենմ...



Ն Ա Դ Ս Օ Ն Ի Ց.

Եթէ սիրում ես—պիտ' անվերջ տանջւես,
 Յագեցնես սիրտը ծարաւ ու ագահ,
 Խեղդող զիշերներ կատաղած փրնառես—
 Ծըճես շըրթունքից թոյնը՝ դու անահ:
 Ես չէի սիրում—աղօթում էի,
 Այնպէ՛ս ջերմ, վըսմ ես պաշտում էի...
 Մի կարեկցութեան խօսք նորա բերնից—
 Իստակ, անարատ, անկեղծ շըրթունքից—
 Ահա՛ բոլորը, ինչ որ խոնարհած
 Կամէի լըսել, ոտքերը դըրկած...
 Ահա՛ աղօթքը, որ ես, դողալով,
 Շըշնջում էի ոսկի յոյսերով...
 Ես գըգւում էի մի՛ գուցէ ըստե՛ր...
 Գուցէ՛ երա՛զ էր այն քաղցրիկ ժամեր...
 Գուցէ՛ ցընճո՛ք էր—մի ցընճո՛ք անմեղ...
 Գուցէ՛ դա ա՛մպ էր երեւում այնտեղ...
 Բայց միթէ՞ բախար խիզախեց ծաղընը—
 Իմ սիրտը կըրկին այրել, փոթօթել...

Նորանոր վըշտով տոչորել նորան...
 Հայհոյել, կեղտել ու թըքել վերան...
 Սակայն յոգնեցայ այս դատարկ կեանքից,
 Վաղուց ձանձրացայ անմիտ օրերից...
 Կեանքի հետ ինձ լոկ մի բան էր կապում
 Եւ դա էր միայն ապրել յորդորում...
 Այդ հրպարտ միտքը դէպ զեղեցիկութեան
 Եւ իդէալի տաճարն սրբազան
 Գոչում էր առաջ և խիստ պատւիրում,
 Որ սիրեմ անվերջ, սիրեմ անդադրում... .



* *
 *

Ինչպէս ճամբորդը, շօքից տառապած,
 Առնում է հանգիստ մի բոպէ պաւերում,
 Ճընշող զարդերը մի կողմը թողած,
 Առւակի անոյշ կարկաջին լըսում
 Եւ, բոպէական մի քաղցրը անդորր
 Իւր սրբտի մէջը յանկարծ ըզգալով,
 Նա փայփայում է, կարծես, մի ջընորք...
 Յընորք,—որ չքկայ ճամբան աւազով:
 Կանաչ ծառի տակ, զովասուն հովտում
 Խըփում է նա իր ծանրացած կոպեր...
 Աւաղ, նա իրան խաբել է ջանում—
 Թէ արդէն հասաւ կարօտած վայրեր:
 Այդպէս, երբեմն ինքըս, խաբւելով,
 Կարծում եմ, ահա մօտեցանք «ափին»,
 Երբ դու ինձ, ընկեր, ոգեւորւելով,
 Երգում ես սիրոյ, ճըշմարտի մասին:
 Եւ ես, իրական կեանքը մոռնալով,
 Ճամբորդի նըման խըփում եմ աչքեր
 Եւ աչնիւ երգի մեղմ օրօրանքով
 Ջանում եմ ջըրել մըռայլ պատկերներ...

Հ Ա Յ Ն Ի Ի Ց.

«Ich wollt' meine Schmerzen
«Sich all' in ein einziger Wort»...

Կուզենայի միակ խօսքով
Բոլոր վըշտերս իմ թափել.
Արագաշարժ քամու թևով
Հեռու այնտեղ ուղարկել:
Նա կրբերէր քեզ մօտ, անզին,
Իմ այդ խօսքը ցաւալից.
Եւ կըհընչէր քո ախանջին
Ամենուրեք սրգալից:
Իսկ երբ նինջը գիշերային
Հազիւ կ'իջնէր աչերիդ,
Կըշքընջար նա, մինչ խորին
Քունը տիրէր նազելիդ:



Կ Տ Ա Կ.

Երբ ես կըմեռնեմ, անմոռաց ընկեր,
Երգելի՛ր—գաղաղբւմ՝ զիսկս չըղնել.
Նեղ կըլնի այնտեղ, չեմ կարող շարժուել.
«Փըրկութեան օրին» ելնել գէպի վեր:
Դու իմ մարմինը չամփոփես հողում.
Ինձ չըբանտարկես մութը, խոր շերմում.
Յանուհի Ասարծոյ—չըկտարես խօսքըս.
Թէ չէ քեզանից կըստուի սիրտըս:
Դիակըս կըբնկես լերան զազաթին,
Ուստից կընայեմ այն «մեռած երկրին»...
Թո՛ղ բարձրը, այնտեղ ես ազատ հանգչեմ,
Առանց պատանի, անդադաղ պառկեմ:
Ազգիս արցունքը, նորա աղաղակ,
ձընշւած բողոքը թո՛ղ այնտեղ լսեմ...
Նորա խրղճալի ու անարդ վեճակ
Մարած աչքերով թո՛ղ անվերջ զիտեմ:
Դուցէ, սիրելիս, նա մի օր զարթնի—
Իր վըզին տեսնէ բազմած ծածիկին...
Ո՞վ զիտէ, գուցէ՛ ձեռքերը մեկնի—
Տապալէ գեաին լերբ բըռնակալին:
Տարիներ կանցնեն զեռ երկա՛ր, երկա՛ր...
Խուլ բողոքներին կ'աջօրպէ «ուռան»...
Ես այն ժամ կ'իջնեմ—կ'երթամ Աւարայր—
Որ նորից մեռնեմ յանուն փըրկութեան...

Ի Մ Ե Ր Գ Ը.

Վէյնբէրգից.

Ես երգեցի ծովի ափում
Իմ վըշտերը ահագին.
Ծովը դողաց խոր անդընդում
Եւ ձայնակցեց անբախտին:
Ես յայտնեցի ազատ հողմին,
Որ խեղդւում եմ այս երկրում.
Նա պարգեւեց զով իմ սրբաին—
Նոր ոյժ, կըռւել խաւարում:
—«Ես յողնած եմ, թաւոտ անտառ,
«Ես հիւանդ եմ»—ասացի...
Օր-օր խըշշաց նա ինձ համար
Եւ ես անդորր նընջեցի:
Ես խընդրեցի արեգակից
Տաք ու պայծառ ճաճանչներ.
Նա ինձ փայլեց ամպի տակից,
Վառեց սառըն իմ ջըղեր:
Ես ասացի ընկեր-մարդկանց,
Որ խիստ նեղ է իմ ճամբան.
Նոքա շտապով դէմքը իրանց
Դարձրին ու լուռ հեռացան...

ԳԵՂԱՌԻՀՈՒ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ.

(Բախշէք—իմ հօր լեզուով պըտի խօսամ.)

Շենում մեծացած ես մի աղջիկ եմ.
Ծուռումնուռ խօսալ, խաչը՝ չըզխեմ.
Իմը լո՛խ դիւզ է... սուտը սիրում չեմ...
Ինչ որ կայ սրբախ, հէնց դիփ էլ կասեմ:
Ասում են, ես լաւ «դիւլիւմ» եմ երգում—
Քաղցըր է ձէներս—համ լաւ եմ պարում...
Ասում են, նախշուն, սե աչքեր ունեմ...
Ամա մի կողմը էդ հալա թողնեմ...
Ապորըս մալը ես եմ պահպանում,
Ոչխարը հանդին մենակ եմ պահում...
Մին օր ծըմակում մնիշակ ի քաղում
Ու էսպէս կամաց «դիւլիւմ» ի ասում.
«Ըրեգնակը մըտել այ,
«Թուխպը ճամպէն կալել այ,
«Լալ մի, լալ մի, այ աղբեր,
«Քիւրդ դագէդ առել այ:»
«Ծառի գըլխին զուշ կըլի,
«Եարը եարին թիւշ կըլի...

«Միրաբ սրբախն որ կըպաւ,
 «Էլ ջոկելը ո՛ւշ կըլի:»
 «Ճիւանդ տըղին մէր պըտի,
 «Կողքին նըստած տէր պըտի.
 «Եթիմ աղջիկ—գարդըս շատ—
 «Աստուածանից սէր պըտի:»
 «Մի դուշ ունեմ դափաղում.
 «Վախտ կանչում ա, վախտ կըտրում.
 «Թամամ օխտը տարի ա
 «Դաշտ ու սարի կարօտում:»
 «Աչքըս դեռ էն եարին ա—
 «Միպտակ կուլով չանին ա—
 «Տիւրիւր մի տա՛, լաց կըլեմ.
 «Միրտըս լեքը արին ա:»
 «Լեօրը թըռաւ էն արտէն—
 «Էլ չըտեսայ էն վախտէն...
 «Աշըղ չի՛, աշըղ դառայ
 «Անաստուած եարի դարգէն:»
 «Էն սարը բարձրը սար ա,
 «Տակը ժընջըլած քար ա,
 «Ես քեզ ընտեղ սիրեցի,
 «Էդ ո՞վ արաւ աչքարայ:»
 «Ետըն դուզը սառել այ,
 «Աչքիս լուսը մարել այ,
 «Վայ, էն շիմշադ գանջըցին
 «Ուշք ու միտքըս տարել այ:»

Մին էլ էն տեսեմ—մի ջահէլ տըղայ
 Ըռուսի շորում առաջիս կանգնած...
 Ես շատ վախեցայ—գըրուտոր տաած—
 չէնց որ էդ տըղին դուբադու տեսայ:
 Մըթին գիշերով մենակ հանգերում
 Արջեց ու գէլեց իսկի՛ չեմ վախում,
 Էդ լըզար տըղեց մի կողմ քաշեցի,
 Բարակ շէի պէս դողալ ըսկսեցի...

— «Աննըման աղջիկ, ինչո՞ւ ես փախում.
 «Ես քո եղբայրդ եմ, ինչո՞ւ ես քաշում.
 «Տանջւած ես եկայ—հանգիստ որոնել.
 «Բընութեան գըրկում ցաւերէս փըրկել:
 «Եւ դու, գիւղական անմեղ հովվուհի,
 «Վիրաւոր սըրտիս գըրեցիր դարման...
 «Ուրեմն երգի՛ր դարձեալ, գիցուհի,
 «Գուցէ քայքայւած թոքերս հովանան:
 «Թոյլ տո՛ւր ինձ ձեռքիդ փընջիկը առնեմ—
 «Ես այդ կըպահեմ, իբրը յիշատակ—
 «Դէ՛հ, մի ամաչիր, ե՛կ երգիր—լըսեմ...
 «Բիչ թեթեանայ իմ ծանրը վիճակ...»—
 Նորա ասածը լաւ չըհասկացայ...
 Ամա էն ձէնը սիրտըս տըրորեց...
 Ամթը, վախը, կասես, մոռացայ...
 Մի հանգի կրակով սա՞ղ ջանըս էրեց...
 Գըլխումըս էլ խելք, էլ միտք չըմընայ...
 Կասես, սըրտումըս մեխեր ցըցեցան...

Շուռ եկայ ու հէնց նայեցի վըրան...
 Դէմքը սըփրըթնած, աչքերը թըրջած...
 Մնիշակի փունջը—շըշկըւած, շաղւած,—
 Դէմ արի... ու էլ չըզխեմ, ինչպէ՛ս...
 Անծանօթ տըղին, աչքերը մըթնած,
 Պինդ փաթաթւեցի, թամամ գիժի պէս:
 Նա կըպցընէ դօշին. ֆնիշակը վերցընէ.
 Մօտեցրուց ծամըս, աչքերը սըրբէց...
 Մին հետ էլ սեղմէյ, թըշէս պաչ արաւ
 Ու անխօս հարսի նըման հեռացաւ...
 Էն օրից էս օր շատ վախտ անց կացաւ.
 Շատ էլ ջուր գետուց ծովը թափւեցաւ,
 Բայց էն արցունքը ու տըխուր երես
 Մինչև հիմի էլ չի գնում մըտքէս...



Հ Ե Յ Ն Է Ի Ց.

«Bist du wirklich mir so feindlich,
 «Bist du wirklich ganz verwandelt» ...

Ասա՛, իրաւ, դու փոխւեցա՛ր
 Եւ, իրաւ, ինձ թըշնամացա՛ր...
 Ամբողջ երկրին կըգանդատւեմ,
 Որ դու վատ ես վարվում իմ դէմ:
 Օ՛, ապերախտ դուք շըրթունքներ,
 Ապա ինչպէ՛ս բամբասեցաք
 Նորան, որ ձեզ համբուրում էր
 Այնքա՛ն սիրով մի ժամանակ:



ԻՅՐ ԵՒ ՓԱԼԱՆԸ

«Էջ ասես—բայ Թողես...»

ԺՈՂՈՎՐԴ. ԱՌԱՄ.

Հին ժամանակին մի մարդ էր ապրում
 Սա մի էշ ունէր, որ շատ էր սիրում:
 Մի օր խրղձում է խեղճ աւանակին,
 Ուզում է թողնել իր ազատ կամքին:
 Շատ է զրժար հաւատար,
 Խօսք ու զրուցին մեծ զին տալ:
 Բայց պատմողը պընդում էր,
 Որ տէրը խիստ բարի էր:
 Նա տեսնում էր իր էշին—
 Միշտ քրտնելիս, տընքալիս...
 Վերջը վըճռեց «Հայվանին»
 Փըրկել ծանրը փալանից:

*
*
*

Երբ որ հասաւ նշանակած
 Օրը էշի ազատման,
 Տէրը զիմեց, շըրջապատւած
 Ծառաներով զէպ «Թովան»...

Հըրամայեց առաջ փալանն,
 Վերցնել էշի գաւակից...
 Հանդիսաւոր հսպէս նորան
 Յետոյ դարձաւ քաղցրալից.
 — «Գընա՛, իմ էշ, եղբ՛ր ազատ,
 «Ազատ դաշտում արածի՛ր...
 «Ձուրը խըմիր զետուց առատ
 «Եւ տիրօջող միշտ օրհնի՛ր...
 «Այսուհետեւ դու չե՛ս կըրիլ
 «Ոչ ծանրը բեռ, ոչ փալան.
 «Քեզ վըճռեցի ազատ թողնիլ,
 «Պատճառ գրտայ քեզ արժան...» —

Էշը երբ լըսեց այսպիսի բառեր,
 Առաջ չըմբռնեց նոցա էութիւնն...
 Բայց «զրլիսի ընկաւ», սըրեց ականջներ,
 Յայտնեց վարմանք ու սաստիկ ապշութիւն:
 — «Ձէի ըսպասում, ով բարի իմ տէր,
 «Որ փալան կրելը ինձնից կըխըլէր...
 «Ձէի երազում—կըհասնեն օրեր,
 «Երբ ես կըլըսեմ այդպիսի խօսքեր...
 «Ինչո՞ւ է, ինչո՞ւ ինձ տէրըս պատժում,
 «Ինձ իմ պաշտօնից զըրկել կամենում,
 «Միթէ՞ յոյժերըս պակսեցան այդքան,
 «Միթէ՞ չեմ արժան ես վարել նորան...
 «Իմ նախահարքը—առանց խըտրութեան—
 «Եղել են արի ու միշտ ժըրաջան...»

«Յիշում եմ պապիս փալանը մէջքին,
 «Որ ոստոստում էր տիրոջ առաջին...
 «Վանքի ջրաղացից հայրըս—օրինակ—
 «Զուխտ ջրվալներով լազաթի՛ն բեռնած,
 «Առանց տընքալու բերում էր մենակ,
 «Ծառան էլ վերան փառաւոր նըստած...
 «Ես էլ համաձայն նախահարց վարքին,
 «Կըրում եմ փալան իմ ծընեած օրից...
 «Կարծում եմ, տէրըս դո՛հ է ինձանից—
 «Պատրաստ եմ ես միշտ մեռնել առաջին...
 «Բայց, երեւում է, երկինքն արդար
 «Բարկացաւ ի՛նչ ի՛նչ մեղքերիս համար...
 «Խըռկում է տէրըս, փալանից զըրկում:
 «Աւա՛ղ, ինձ նորան արժան չէ հաշւում:
 «Բայց ո՛չ... զըթա՛, տէր, մի այգւլէ՛ս պատժի՛ր.
 «Դու ինձ մի՛ ջուկի սիրուն փալանից.
 «Կուզե՛ս—հէ՛նց այստեղ ախոռում խեղդի՛ր,
 «Միայն մի՛ շեղի «պապական ճամբից»:—»

*
 * *

Էսպէս բիւրերով լի է մեր աշխարհ—
 Պըտղատու հող է, բերքը անհամար...

Գամ. Քամիպալի աղաւաղումը:

ԼԵՐՄՕՆՏՈՎԻՑ.

Երկնաւորի զըռան շեմքում
 Նիհար ձեռքը կարկառած,
 Նա մի կըտոր հաց էր խընդրում,
 Սովից, վըշտից տառապած...
 — «Ողորմեցէ՛ք անբախտ մարդին» —
 Մըմընջում էր խուլ ձայնով...
 Եւ մէկն նորա պարզած ափին
 Դըրեց... ի՛նչ... քա՛ր, ժըպտալով:
 Եւ ես երբեմն բաղնում էի
 Սիրոյ «կողպած» դարբասներ,
 Սակայն ներսից լըսում էի
 Միայն դառըն կատակներ:

Ես սիրել եմ վատ ընկերին—
Զերթաս և դու նոյն շաւղով... —

Հին սխալիս ուղղումը:

* *
*

Աստ՛ ինձ, ինչո՞ւ չար դարձայ այսպէս.
Ինչո՞ւ մաշւեցաւ իմ մատաղ հոգին.
Ինչո՞ւ աշխարհը ընկած է աչքէս.
Տէր իմ, ախար ի՞նչ պատահեց սրբախա...
Ինչո՞ւ անմեղ բառ, մի չընչին վարմունք
Սեփրմ կասկած է իմ մէջը ծընունւմ...
Ո՞ւր է այն սէրը, ո՞ւր է սրբութիւնը,
Որ ըզզում էի մարդկանց շքրջանում...
Սոյս ո՞ւր եմ փախչում, ո՞ւր անհաշտ հոգւով,
Եւ ինձ, և կեանքին անէծք կարգալով...
Ինչո՞ւ այս աստղեր, ինչո՞ւ այս լուսին
Վաղւան հրապոյրը ինձ համար չունին:
Ինչո՞ւ աղջնկայ հայեացքը մեղմիկ
Զրդւանք է միայն իմ վերաս ազգում...
Ինչո՞ւ այն զիւթիչ ժրպիտը քաղցրիկ
Առաջւայ նրման չի՛ ոգևորում...

Տէր իմ, չեմ եղած երբէք մարդատեաց...
Սակայն, ինչո՞ւ ես, կարծես, ջրնորւած,
Կուզէի խեղդել ջուկ-ջուկ ամենքին,
Որ հանգիստ առնէր հիասթափ հոգին...
Անաղնիւ ընկեր, ինչո՞ւ քեզ այնպէ՛ս
Սիրում էի ես, անվերջ հաւատում...
Ինչո՞ւ իմ սիրտը հանեցի կրծքէս
Եւ դրո՛ւ մի պիղծ Յուդայի սրբաւում...
Այն իղէ՛ալը — զրգւած ու շոյած, —
Երկար և անքուն կէս-դիշերներին...
Սիրած մի անոն, մըտքէ՛ր փայփայած...
Սեփրմ փողոցում. մասնա՞ծ ճաղերին...
Կեղտե՛լ հայհոյե՛լ այն ցրտեղէնը...
Ուր մենք ծընկաջք կողբայինք զեանին...
Եւ ո՞վ... ընկե՛րը — այն «աղնիւ ընկերն» —
Նոյն իղէալի, նոյն մըտքի ընկերն... ԼԵՂՈՒՍ



ՆԱԳԻՍՈՒՅՑ.

Էլ չասէք. մեռաւ—կենդան է նա դեռ.
Քանզաճ սեղանին փայլում են կայծեր.
Գրջլտած վարդը բուրում է կրկին.
Սկկորդն հեկեկում ջարդւած քրնարին:



ԱՆՊՏՈՒՂ ԵՐԿՈՒՆՔ.

(Հայկական քալլադա.)

Ելինը—միայնակ, երկունքի միջում,
Եւ նա չարաչար տանջւում է ցաւից.
Սյդ խորհրդաւոր, սրտաշարժ ժամում
Ձրկայ փարատող, չըկայ կարեկից:
Ձորս կողմը դատարկ, ամայի քաշտեր,
Լեռներ վիթխարի և հըսկայ ծառեր...
Միայն մօտակայ անանց անտառում
Գայլերը սոված ոռնում են, ոռնում...
Երկինքը տըխուր, անասող անլուսին,
Ծընդդական կինը տարածւած դեանին.
Ծըխի հեա կըրծքից ելնում են ախեր,
Ասես, ներքինը այրելիս լինէր:
Եւ չըկայ ոչ ոք—օգնութեան հասնէր.
Երկիրը, կարծես, անապատ լինէր.
Միայն մօտակայ անանց անտառում
Սոված դայլերը ոռնում են, ոռնում...

Ոչինչ չէ տեսնուում—խառար է չորս դին.
 Ձից՞ գայլերը լափում են խեղճին...
 Կըսկծալից տընքոց ու խեղզաճ մի ձայն
 Մըթնիցը յանկարծ ականջիս հասան...
 Հոգմը տանում է իր հեռ տարածում
 Կընծ հառաչանքն հեռու աշխարհում.
 Բախտաւոր մարդկանց քունը կըտրելով,
 Վըրդովում նոցա իր գէշ նըւագով:



Հ Ե Յ Ն Է Ի Յ.

«Und wüsten's die Blumen, die Kleinen,
 «Wie tief verwundet mein Herz...»

Թէ գիտնային փոքրիկ ծաղիկունք,
 Սըրտիս վէրքը ծանրագին,
 Կըթափէին ինձ հեռ արցունք,
 Որ դարմանեն իմ ցուլին:
 Թէ բըլբուլներն գուշակէին,
 Ո՞նց եմ հիւանդ, թախծագին,
 Նոքա անշուշտ երգ կ'երգէին,
 Ամրացնելու իմ հոգին:
 Թէ կըսկիծըս հասկանային
 Աստղիկները ոսկէփայլ,
 Նոքա բարձրից կընջնէին.
 Մըխիթարանք ինձ կարգալ:
 Բայց այդ ոչ ոք չէ իմանում
 Բացի միայն մէն-մէկից...
 Նա հէնց ինքն է սիրտըս փըշրում,
 Սիրտըս պոկում արմատից:



ՀԱՅՈՒ ՄԵԾԵՐԸ.

(Ըստ Պատկանեանի.)

Մէկը սաստիկ հայհոյում է, պախարակում հայերին,
Պատճառ իրան չեն «հասկանում», զին չեն զընում
«հանճարին» .

Ամբողջ մի դար նա շուտ ծընեց—այն էլ փրթած Ասիում...
Իր «մրտքերը» գուցէ միայն ըմբռնէին Եւրոպում:
Եւ այդ «երկնից կաթած լոյսը» ման է գալիս վերսկզբում,
Միշտ միայնակ, յօնքերն կիտած, գլուխը կըրծքին
խոնարհած.

«Ամբոխը» նա խիստ ատում է, հեռու փախչում «աղմուկից» .
հայու մասին նա կրկնում է «քան չի դուրս գալ նորանից»:
Միւսը դըպրոցն կիսատ թողած, երկրորդիցը խռակըած,
Ուսումնական, խելքիցն իր վեր քանի մի Ֆրազ սովորած,
Մայրանի մէջ ըզբօսնում է, շըլացընում ամենքին,
Մերթ Շէքսպիրին, մերթ Դարվինին քըննելով շատ
«խըստազին» ...

Սակայն, ափսոս, որ հայերը կոյր են երկու աչքերով,
«Կապիտալիստն» չէ կամենում օղնել նորան իր փողով.

Որ նա անցնէ արտասահման, ստանայ «բարձր կըրթութիւն» .
հաստատէ, որ «մեծ մարդկանցով» շատ առատ է հայութիւն:
Այս պարոնը մեծ ազգից է և ծագումով հին իշխան—
Ունէ նա մուտք յայտնի մարդկանց «սալօնները»

անխափան—

Նա յայտնել է, որ երբ հային «ավտօնօմեա» տայ Սուլթանն,
Գուցէ ինքը համաձայնի կառավարել հայաստան...
Բայց առայժմ նա չի խոսնում հայու «չնչին»
գործերում... .

Գուցէ անգամ չհամաձայնէր լինել և այդ պաշտօնում...
— «H0, ես զիտեմ, համոզւած եմ» — աւելցնում էր,
ժրպտալով—

«Որ ինձ հանդիստ, դադար չեն տալ, կառավարել
խընդրելով... .

Երկու-երեք ոտանաւոր երեք տարի կարկատողն
Խիզախում է յոգնած ձայնով զիմել հեռու ապագան...
— «Պէ՛տք է զընամ, թող քարկոծեն» — գոչում է խեղճ
«ըստեղծողն» ,

«Պէ՛տք է զընամ, թէպէտ փուշ է, տատասկօտ է իմ
ճամբան»... .

Ոչինչ չըզբած, ոչինչ չարած, ո՛չ մի նոր միտք չը յայտնած,
Տըրտընջում է արդէն հայուց, իրեն Բայրօն ձեւայրած...
Ի՞նչ է... իսկոյն զին չըզբին և չեն կանգնել դեռ արձան...
Միթէ՞ արժէ հայուն մըտցնել «մուզանների բուրաստան»...
Մի այլ խիզախ մըրոտողը շատ զըժգոհ է հայերից.
Այսքան տարի նա չարչարեց, հանեց նոցա «խաւարից» ,

Բայց իր թերթին հազար անգամ դեռ բաժանորդ չըտըւին
Չունէ՞ արդեօք նա իրաւունք «գանակոծել» ամենքին:

*
* *

Այն երկիրը, որ կոչոււմ է երբեմնապէս հայաստան,
Շատ է պարարտ—արտադրում է այսպէս «մեծ-մեծ»

մարդիկներ...

Այդ «մեծերը» մանրը գործերն համարում են անարժան,
Միշտ ուզում են խաղալ միայն աչքի ընկնող մեծ դերեր:
Եւ այսպիսով կամ հեռւից են քարեր նետում, ցեխոտում...
Կամ դեռ շեմքում, նոր ըսկըսած, մեծ պարզենէր

պահանջում...

Եւ բոլորը համարեա՞ թէ գանգասուում են, «մըտաւորում»,
հայու գըլխին «ընկոյզ կոտրել» մի սրբազան պարտք

հաշւում:

Իսկ խեղճ ազգը, համբերելով երկար դարեր ծաղըանքին,
Դիմանում է «ճարը կըտրած» և իր որդւոց վարկերին...
Իր ծեր գլուխը խոնարհաբար քար ու ցեխին դէմ արած,
Կարծում է, թէ ճշմարիտ է, արժանի է «աքացեաց»...

Ն Ա Պ Ս Օ Ն Ի Ց.

Մի՛ դընիր կապանք ոգևորութեան,
Մի՛ զըստիր ազատ ծիծաղը սըրտիդ.
Թո՛ղ ինչ ծընունդ է սրգի, բերկրութեան,
Բոլորը հընչէ անկեղծ լարերիդ...



ՄԻ ՓՇՐԱՆՔ

(«Այն երազ չէր» պատկերից, որը չէ կարող մտնել սոյն ժողովածուի մէջ.)

Մի արևուր երազ տեսայ այս գիշեր.
Իբրեւ Մասիսի գագաթին կանգնած,
Նայում եմ շուրջըս—գերեզման դարձած—
Նայում եմ, դիտում այն սրգոյ պատկեր...
Հայաստան երկիրն մոխիրով պատած,
Վանքեր, քաղաքներ քարուքանդ արած,
Արտերը այրած, գիւղերը դատարկ
Եւ ամենուրեք լուռ, անմարդաբնակ:
Մերթ այս ու մերթ այն լեռների վերան
Նըշմարւում էին քիւրդի հրոսակներ—
Դոքա, գիշտալիչ գաղանի նըման,
Որոնում էին—քաղցը փարատել:
Դաշտը անմըշակ, գութանը ընկած
Եւ հայ գիւղացին արնում շաղաղւած.
Եղները տարան, հեռու քըշեցին,
Ականջ չըզըրին նոցա բառանչին:

Անխոնջ նանիկը, կըթղանը զոգում,
Բակումը էլ չէ «խընձորին» կըթում...
Հայու աղջիկը «սաղմոսի զանգին»
Ձէ լըցնում կուժը սառնորակ աղբրին:
Հայ երկրագործը գերանդին ուսին
Իր արտը երթալ էլ չէ ըշտապում...
Նորա «հօլօլ» երգը քաղցրադին
Վաղ առաւօտեան չէ օդում թընդում:

* *

Հայաստանում չէ՛ մանուկը խաղում,
Երեխան քիւրդից շատ է վախենում...
Նորա «բըզլանը» հարթած կալերում
Երկար պըտոցտով էլ չի պըաւտում:
Հայոց աշխարհում չըկան մանուկներ—
Թուրքը կոտորեց պեռ օրօրոցում...
Եւ ջէհէլ հարսի լեքը ըստինքներ
Ցամաքում են այժրմ թուրքի հարեմում...
Հայու աղջիկը չունի ամուսին,
Հայու աղջիկը հարճ է խաներին:
Իսկ երկրագընդիս բոլոր ծայրերում
Հայ երիտասարդն բեռներ է կըրում:

* *

Երասխի ջուրը մըռայլ հոսանքով
Գընում է թափւել ու խեղդւել ծովում...

Արևը փայլուն, ոսկի ջրնձուղով
Դրժբախտի ուշքը էլ չի զրբաւում...
Եւ այսպէս գետը իր բիւր վըշաերից
Դիմում է, կարծես, ինքնասպանութեան...
Երբեմին նորա խոժոռած գէմքից
Ցայտում է ժրպիտ խելագարութեան...
Եւ կըռուկներին մի ամբողջ երամ
Թռչում էր բարձր, բարձր եթերով...
Անտէրունչ երկրին մի վերջին անգամ,
Կարծես, սըրտառուչ «հողոց» երգելով:

* *

Վանի մօտերքում ծուխ էր բարձրանում,
Բայց ոչ երգիկի նեղ ծըննելոյդից...
Դա մի ահագին հըրդեհ էր գիւղում—
Թալանած քիւրդի աւազակ խմբից...
Քամին տանում էր ու հեռի հասցնում
Սյրւած երեխոց ձայնը կըսկծաղին...
Արձագանք չըկար—խաղաղ էր տիրում...
Օգնութեան մի յոյս չըկայ զոհերին...

* *

Էլ չըկարացի դիմանալ երկար.
Դէմքըս ծածկեցի ափերիս միջին.—
«Անբախտ հայրենիք, խըղձալի աշխարհ,
«Քեզ ո՞վ անիծեց այդքան խըստաղին...»

Կամենում էի գոնէ արտասուել
Եւ սըգալ իմ մօր մահը բըռնական,
Բայց արտասուքըս փաղուց էր հասել,
Ցամաքել, երկար ողբալով նորան...
—«Արդ միթէ՞ չըկայ էլ յոյս փըրկութեան,
«Միթէ՞ կորած ինք, կորած յաւիտեան»...
Յանկարծ ներքեկից մի ձայն տաղտկալից
Հանեց ինձ ծանրը, խոր մըտածմունքից...

* *

Սյրարատ դաշտում ձրգւած էր Անին—
Հին-հին դարերի բեկորը փառաց,—
Թագանիստ Անին, մարդաշատ Անին,
Սյոբմ քարուքանդ, խաւարով պատած...
Միայնակ բնակիչ աւերակներուն—
Բուն է մընացել արթուն պահապան...
Անցորդը մօտով տարաժամ պահուն
Սարտուռ է ըզղում, լըսելով նորան...
Քիչ հեռու, այնտեղ ջըրւած են խաչեր,
Խաչերի սուերում մի քանի խուցեր,—
Ուր մեր հոգեոր

—«Արդ ո՞ւր ինձ փընտռեմ գէթ մի ըսփոփանք,
«Տէր իմ ո՞ւր դարձնեմ իմ ապշած աչքեր...
«Գոնէ՞ պարգեւի՛ր մի մըխիթարանք,
«Մի նեցուկ, որ բիւր տանեմ այս ցաւեր...» —

*
* *

Սակայն վրձուեցի Մասիսից լիջնել
Եւ հայոց այն մեծ շիրիմը տեսնել...

.
.

Երկար շքերհեցի Սնիի միջով.

Մըտայ ամայի հոյակապ շէնքեր... .

Հայոց հին հանձարն կիսաւեր տեսքով

Դեռ մարդուս զարմանք, հիացում կ'ազդէր...

Յողնած կամեցայ նըստել վերջապէս,

Մի մեծ տաճարի սանդուխքի վերան...

Բայց յանկարծ մի կին երևաց աչքիս,

Որ դանդաղ կիջնէր դէպ իմ յանդիման...

Գերբընական էր դէմքը, անըման,

Սակայն սքողած յանցով տրիրութեան.

Մի վիշտ անփարատ և անբուժելի

Տանջում էր, կասես, կուսին նազելի:

Մի ձեռքում բըռնած... . Հայկազեան,

Իսկ միւսում ոսկուց մի սուր պատեանում.

Տեսիլը կանգնեց դէմ առ յանդիման,

Ինչ ոտքից ցըզլուխ զըննելով տըրտում...

Ես զարհուրանքով նայում եմ կուսին—

Սչն իմաստալից, խորունկ աչերին... —

Սառն բըրտինքով քըրտնեցի, կարծես,

Մի պաղ-պաղ քամի սողաց իմ մէջքէս...

*
* *

—«Մօտեցիր ինձի, ո՞վ դու պատանի,—

Ասաց նա ձայնով, վերջապէս, յողնած—

«Եկ, մի՛ երկընչիր. քո հայաստանի,

«Բո մօր հողին եմ, այնքան սառապած...

«



Հ Է Յ Ն Ի Ի Յ.

«Du schönes Fischermädchen
«Treibe den Kahn an's Land...»

Դու եմ սիրուն ձրկնորս աղջիկ,
Մակոյկն ափին մօտեցրու.
Արի՛ այստեղ, նըստի՛ր մօտիկ,
Խօսենք, գրեկած իրարու:
Գըլուխըդ դի՛ր դու իմ սըրտին
Եւ մի՛ այդքան երկընչեր.
Դու քեզ վայրի, անսանձ ծովին
Ձէ՛ որ վըստա՛հ յանձնեցիր:
Իմ սիրտն էլ է մի ովկիան—
Միշտ յուզւում է, մըըըրկում..
Բիւր մարգարիտ նա աննըման
Ունէ պահած իր խորքում:



ԳԻՏԵՍ—Ո՞Վ ԵՄ.

(Աշուղի «նէյնիմ»-ներիցը.)

Ես մի որբ եմ, անյայտ որբ եմ—
Առանց տէր ու տիրական.
Ամբողջ երկրին ես օտար եմ—
Առանց տէր ու սիրական*):
Գլուխըս ծըռած թափառում եմ—
Առանց ընկեր, կարեկից...
Չըկայ մէկը, որ երբ ընկնեմ,
Մեկնէր ձեռքը անբախտիս:
Սիրտըս ծարաւ, պապակում է...
Որտե՞ղ զըսնեմ նորան տէր...
Արեն այրում, փոթոթում է...
Ո՞ւր փընտըռեմ ես մի սուեր:
Անցած ճամբովս—անապատում—
Չըկայ մի ծառ, ապաստան.

*) «Աշուղի (երգչի) հաղը (երգը) որ կըլիսի (հատի, վերջանայ), «նէյնիմ»-ները (ի՛նչ անեմ, ի՛նչ երգեմ—«տակից գըլիսից», «արան-դան-սարանդան» բաներ) կըսկսի»:

Ուր նայում եմ, ուր որ դիմում,
Միշտ բացւում է գերեզման:
Ձայն եմ տալիս, նա մարում է.
Ձրկայ ձայնիս արձագանք...
Բայց դեռ սիրտըս տրոփում է,
Պահանջում սէր, զրգրւանք...

*
* *

Արդեօք երկար պիտի շըրջեմ
Անմըխիթար այս կեանքում...
Կըզայ այն օրն, երբ կըզրանեմ
Սէր այս անսէր աշխարհում:
Գուցէ շուտով պիտի մեռնեմ—
Դեռ չըհասած փափագիս...
Գուցէ վաղը երկինք ճամբեմ
Բազմաչարչար իմ հոգիս...
Այո, թող նա պատմէ Տէրին
Իր անպըտուղ տառապանք...
Ասէ՛, չըկայ մարդկանց միջին
Անկեղծ սէր ու ըսփոփանք...
Թող նա խընդրէ այնտեղ Տէրից—
Ստեղծել մի թարմ երկրագունդ
Եւ մի ուրիշ, ազնիւ հողից
Սերել մարդկանց նոր սերունդ...

Մ Ո Ւ Ջ Ը Յ Ի Ն.

Նաղսօնից.

Պոկի՛ր ճակատից պըսակը զափնեայ,
Ձրգի՛ր ոտքերիդ տակը անխընայ.
Փնւշը արնալից, փնւշը կոպտազին
Կըսազայ միայն դէմքիդ զըծերին:



*
* *

ՄԵՆՔ ԿՐՈՒՈՒՄ ԵՆՔ.

(Նւէր Նոր-Տարւան առթիւ իմ բոլոր ընկերներին.)

Թողնենք, ընկեր, մեր անձնական
 Անվերջ, մանրո հաշիւներ.
 Նոքա չունին չափ ու սահման,
 Ինչպէս այս մոլթ ալիքներ:
 Մենք ժամանակ չունինք, ընկեր,
 Ներքին կըռուով պարապել.
 Նայի՛ր, չարը իր սև թևեր
 Որքան լայն է սրվորուել:
 Զվատնինք, ուրեմն, մեր ոյժերը,
 Նախատելով, զ՞ուր, իրար...
 Մեզ դռնում է գաղափարը—
 Հաշուինք միայն նրա համար:
 Ես չեմ ուզում քեզնից ինձ սէր...
 Սիրի՛ր միայն գաղափար...
 Դու քո հոգւոյդ բոլոր ոյժեր
 Զէ ո՞ր նորան խոստացար:

Մինչդեռ երկմիտ, այնտեղ ափին,
 Կ'տատանէինք իջնել ծով...
 —«Զոհենք մեր կեանքն իդէալին» —
 Դու ասացիր անվերջով:
 Այժմ ինչո՞ւ վտանգի դիմում
 Նեղսրբաւում ես, խռովում...
 Ասա՛, ինչո՞ւ մեղանչում ես—
 Անձնականը մէջ բերում...
 Ի սէր Ասածոյ, լըռի՛ր, ընկեր.
 Յանուն «նորա» հաշարւինք...
 Թէ չէ շուտով կ'հասնէ գիշեր,
 Վայ թէ՛ ճամբուց շեղեցինք...
 Ձե՛ռք տանք իրար, թիավարե՛նք.
 Դեռ չենք անցել կէս-ճամբան...
 Փոթորիկը մօտ է... ելնե՛նք
 Մենք անվեհեր յանդիման:
 Թող մեր սրբտերն չըվըհատին —
 Թէպէտ քիչ ենք մենք թըւով —
 Վարենք նաւը ի միասին
 Հաշտ, ներդաշնակ ջանքերով...

*
* *

Ամբողջ ծովը կենդանացած
 Մեզ ուզում է կրլանել...

Ալեքները սարեր դարձած
 Մեղ ծաղրում են անարգել:
 Նոքա, բարձրը գոռգոռալով
 Կարծես, կասեն միմիանց.
 — «Նայիր, աբա, անյաղթ մայր-ծով,
 «Ողորմելի այս մարդկանց.
 «Երկու հոգևով փոքրիկ «տաշտում»
 «Խիղախում են ճամբորդել...
 «Անմիտները չեն հասկանում,
 «Ի՞նչ են հրսկայ ալեքներ:
 «Բայց թող լողան. մութը պատէ,
 «Մոռցնել կրտանք խաղ-խաղալ.
 «Այո, վատ է, անչափ վատ է,
 «Այլաց հետը «կոճի-տալ»:
 «Զրվարձացնենք մեր մայր-ծովին.
 «Քանի օր է նա տըրտում...
 «Եկէք, խաղանք մի լաւ «օյին»
 «Սոցա զըլիւին խաւարում...
 «Շրջապատենք փոքրիկ «տաշեղն»,
 «Որ նաւակ են անւանում,
 «Եւ միայն մեր դէմքովն ահեղ
 «Սառցնենք արիւնն սրբտերում...» —

*
* *

Աւաղ, մենք չենք թիվարում.
 Նաւն իր կամքին է թողած.

Մենք կըռում ենք... անվախ կըռում...
 Բայց... իրար դէմ... ոչ ալեաց:
 Իսկ զիշերը մօտենում է.
 Ծովը փրփրած մըրթմըրթում,
 Նաւը «անսանձ» թափառում է —
 Ուղիղ ճամբուց խօտորւում:
 Ալեքները հըռհըռում են,
 Ծափահարում մէկն միւսին.
 Նոքա արդէն ըսկըտում են —
 Իրագործել չար «օյինն»...
 Շուտով կ'պատէ թանձրը խաւար.
 Մեղ հողմն հեռու կըտանի.
 Ընկեր, կ'իրոյցնենք «լոյսը պայծառ»...
 Ո՛չ... մենք այնտեղ չենք հասնի...



ՄԱՐՏՈՎԻՑ.

Ինչո՞ւ հոգիս մրուայլում է
Եւ օրից օր մըլթանում:
Անցեալը թէ ապագան է
Նորան այդպէս սրճանեղում:
Ո՛չ անցեալը, ո՛չ ապագան
Զեն իմ սրբոյն ծանրանում...
Այդ ներկան է, տըխուր ներկան,
Հետըզհետէ փրչանում...



ԷՅ, ՍԱ ԷԼ ԻՄ ՍԷՐԸ.

(Աշուղի «նէյնիմ» -ներից.)

Գիժի նրման ես սիրում եմ, բայց ո՛չ չըքնաղ մի աղջեկ:
Ես պաշտում եմ, մեծարում եմ միայն երկու սե աչեկ.
Այդ աչքերը չե՛ն դերբնական, չունի՛ն ոչինչ երկնային—
«Հուր» ու «կայծակ», «թոյն մարդասպան», օ, չեն շանթում
նայողին:


Ինձ չըգերեց այն աչերի արտասովոր մեծութիւնն
Եւ ո՛չ աղջկայ ալ թըշերը, բարակ մէջքի քընքշութիւնն...
Աստաճ վըկայ, չէ՛ պատկանում հուրիների նա կարդին.
Կուրծքն էլ բընաւ չէ նրմանում «ջուխտակ կըռու
շամամին»...

Այո, չունի չըքեղ մարմին, «մոմից թափած մատիկներ»
Եւ չի ասում նա բըլբուլին. «թող ես երգեմ վարդ ու սէր».
Մի հեղ, տըխուր, կարծես, անձայն օրիորդ է իմ սիրած,
Երկու աչքեր ունի միայն, որոնց դեռ չեմ հասկացած:
Ես չեմ ուզում ո՛չ համբուրել և ո՛չ «ուտել» այն աչերն—
Դա կըլինէր սըրբապըղծել իմ անարատ, անշահ սէրն—

Միայն կամիմ հեռում կանգնել և լուռ նայել մէջքներն...
 Կարգալ, տեսնել—ի՞նչ են ասում այդ թախծալի սե աչերն:
 Անբուժելի, գաղտնի մի վիշտ թաղներում է խորքերում:
 Ծանրը մի քար, կասես, վաղուց ձրնշում լինի անբախտին.
 Վախենում ես, թէ մօտ գընաս, լինես նորան կարեկից,
 Հարցնես դարդը.—«Ես անձանթ, ում ես կորցրել

սրբտակից» ...

Վայ թէ՛ հարցէ՛ղ վերքը պայծեց—արեան գետեր հոսեցին.
 Վայ թէ՛ ղէմքը նա լուռ դարձրեց և լուռ թողեց, հեռացաւ,
 Ու քեզ անե՛լ մի հոր ձրդեց, մի հոր ձրդեց, չըքացաւ...
 Ես սիրում եմ մի անձանթ, մի անորոշ «թախծութիւն»,
 Անպատմելի, գաղտնի վըշտից տոչորում մի «էութիւն»...
 Այն հեզ, արխուր, կարծես, անձայն օրիորդն է իմ սիրած—
 Երկու աչեր ունի միայն, էն է՛լ դեռ չեմ հասկացած...



Հ Ե Յ Ն Ի Թ.

«Ich will meine Seele tauchen
 «In den Kelch der Lilie hinein...»

Երբ կընկըղմեմ ես իմ հոգին
 Շուշան ծաղկի կոկոնում:
 Թո՛ղ շուշանը սիրուս մասին
 Մի երգ շնչէ՛ դողանջիւն:
 Եւ թո՛ղ երգը թըլպըլտալով,
 Ենէ՛, ինչպէս այն պաչիկ,
 Որ նա արւեց դողդողալով
 Ինձ մի գիշեր երջանիկ. . .

ՀԱՆՆԵԼ ՈՒԿ.

Մի բառ գիտեմ խիստ զըզւելի—
Անդուծ մարդու մի տխուղոս—
Բիւր-բիւր տանջանք անասելի
Կըտայ հայուն բարբարոսն:
Ամբողջ բառը երկու վանկից,
Ընդամենը, է կաղմւած.
Առջի վանկը երկրորդ տառից
Կենդանի է հըռչակւած:
Միւրուքաւոր այդ կենդանին,
Բառի տիրոջ մեր նըման,
Կառաջնորդէ իր լուռ հօտին,
Ուր կամենայ անպայման:
Երկրորդ վանկը հայ գեջկուհին
Խընոցիով է հարում
Եւ իր «անհայր» զաւակներին
Այդ «մնացորդով» կերակրում:

Թէպէտ անխոնջ կընոջ ձեռքէն
Կարագ էլ է պատրաստուում...
Բայց քիւրդ բէկերն միշտ խըլում են,
Տանում Պօլիս, «աշ» եփում...
Եթէ, տըղերք, առաջարկած
Այս խընդիրըս լուծեցիք
Եւ այդ անխիղճ ու անասուած
Մարդու անունն ասացիք...
Երգէ՛ք պահել սըրտում ձեր միշտ
Մի անհաշտ ռի աղգային
Դէպ նա, որ մահ, զըրկանք ու վիշտ
Այնքան կ'հասցնէ հայերին...



Կ Օ Ձ Լ Ո Վ Ի Ց .

Մի՛ լար, մանկիկ, որ անտառը դեղնեցաւ.
 Մի՛ լար, ի զուր, որ շուտ գարունն չըքացաւ.
 Որ չեն լըսուում սոխակի մեղմ՝ դայլայլեկք,
 Որ խաւար է ցուրտ գիշերը—երկար-ձի՛ղ:
 Դու վըշտացած դառն արցունք մի՛ թափիլ,
 Մերկ ծառերը տերեւներով չեն ծածկւիլ.
 Օր մի շքեղ—այժմ անզարդ—վարդենին
 Ձի փըթըթւի սառ ցօղի տակ աշունքին:
 Օ, հաւատա՛. քո պօէտի սըրտումը
 Դեռ բուրալից պըճընւում է գարունը...
 Միայն սեղմի՛ր ձեռքը ժրպտով սիրավառ
 Եւ նա կ'երգէ գարնան նըւագ քեզ համար:
 Ոգևորւած գեղեցկութեամբ երկնային,
 Նա կըշնչէ քաղցըր տաղեր լարերին...
 Բըլբուլն անգամ իր հոտաւէտ սիրեկնին
 չէ՛չ չէ կարող երգել նոյնքան սըրտագին...



ՎԱՀԱԳՆԱՅ ԾՆՈՒՆԳԻՐ.

«Երկնէր երկին և երկիր,
 «Երկնէր և ծիրանի ծով...»

ՄՈՎՍ. ԽՈՐ. ԳԻՐԳ. 1. ԳԼ. 31.

Այս ի՞նչ պատահեց, այս ի՞նչ է դղըրդում,
 Խըռպոտ հողոցներ անդունդից հանում,
 Մի ձայն է լըսուում—խուլ ու զարհուրիչ—
 Այնտեղ ալէկոծ, կատաղած ծովից:
 Փըրփրած ալիքներն, կասես, վախեցած,
 Փախչում են դէս-դէն, հըրերով իրար...
 Ճիչ են արձակում, ահիցը կապտած,
 Ապաստան փընտռում թաղնւելու համար:
 Երերման մէջ էր երկիրն անսահման,
 Ծիրանի ծովը եռում էր խորքից,
 Հառաչում, ծընող կընոջը նըման:
 Տատանւում էին անսասան սարեր,
 Զարդւում, փըշըրւում ամրագին ժայռեր...
 Դեւերը, կարծես, ելած զըժոխքից
 Վըճռել են քանդել աշխարհը հիմքից:
 Ամպը կոխել էր, սեպըրել երկինք,
 Քօղարկել ահը մեծ Արամազդին...
 Տարերքը դարձեալ կ'ուզէին վաղան,
 Կարծես, թէ դառնալ խառն զըրութեան:

* *

Բայց ահա քիչ-քիչ աղմուկը մեղմեց,
 Սյդ օտարոտի կօնցերտը լռեց...
 Մի խորհրդաւոր ու լարւած ապշանք
 Ողջ տիեզերքին տիրեց անդուման:
 Բնութիւնը, կարծես, հրաշքի էր սպասում...
 Եւ, իրաւ, յանկարծ—մի ակընթարթում—
 Զուրը պատառւեց, անդունդը ճեղքւեց,
 Յատակից կարմիր եղեգնիկ ցայտեց:
 Նա ոլորւում էր, պրտըտւում օդում,
 Փռքւում էր, ուռչում, ահագին զառնում...
 Ալեքները, մեղմ վըշշալով հեռւում,
 «Կուչ եկած» իրար վարմանք են յայտնում...
 —«Սյս ո՞վ է ծընւել մեր մօր արգանդից—
 «Մեր մայրը սուրբ է և ազատ մեղքից...
 «Վրկայ է համայն Արարիչն երկնից,—
 «Սյս բանից իսկի՛ լաւ հօտ չէ գալիս...»—

* *

Եղէգըն ընկաւ, վերջապէս, ափին,
 Թանձր ծուխ ու հուր բերնից թողնելով...
 Ափը կաղմում էր սահմանը երկրին,
 Ուր խօսում էին հայկական լեզուով:
 Յանկարծ լըսւեցաւ մի սաստիկ պայթիւն.
 Իրզըրդաց, շարժւեց զարձեւալ բընութիւն.

Եղեգնու տեղը տեսնւեց գեղեցիկ,
 Մի լուսաճաճանչ քաջ պատանեկիկ:
 Հըրեղէն տղան չորս կողմը նայեց
 Եւ հայկայ աշխարհն քայլերը ուղղեց...
 Խըրոխտ աչքերը կայծակ կ'ցայտէին,
 Իսկ ակունք երկու արեգակ էին...
 Պատանին շտապով վազում էր հասնել
 Իր հայրենիքը վըտանդից փրօկել...
 Հարեան ցեղերն ըսպառնում էին
 Կըլանել անտէր Թորգոմայ ազգին...
 —«Կեցցէ՛ Վահագըն—զիւցալն զիւցազանց—
 «Եւ աստաճներն որդին հայկազանց...
 «Կեցցէ՛ վիշապանց աշխարհից Ծոնծող»—
 Սյսպէս երգեցին հոգեւոր հայրերը,
 Դիւցազնայ ծնունդը փառաբանելով,
 Եւ հայոց դետեր է հայոց երկինք
 Թընդացին, նորա գոգընտն թօնելով:

* *

Իսկ հայ գուսանը բամբիւր ձեռքին
 Հրապարակներում գովում էր քաջին...
 Եւ անցան դարեր... ամբօխը պաշտօն,
 Տիրանայ որդուն զոհեր մասուցեց:

Ն Ա Փ Ս Օ Ն Ի Յ.

Թո՛ղ հանգցնէ իմ մէջ կեանքիս նըշոյլներ ո՛չ մեռած
բնութիւն
Եւ ոչ թէ ծանրը մի յանկարծակի, կոյր հիւանդութիւն,
Սյլ իմ ուղեղըս, ազատ ուղեղըս, որ էլք չէ զրանում,
Բանականութիւնս, որ թըշառ բախտի հետը չէ հաշտում:



Մ Ո Ի Զ Ա Յ Ի Ն.

(Դարձեալ աշուղի «Նէյնիմ»-ներին.)

Դէ՛հ, ինձ չարչարող, դուք անզուսպ մըտքեր,
Շուտով փոխւեցէք սահուն տողերի.
Սիրտ իմ, թելադրի՛ր, թափի՛ր քո վըշտեր,
Թող թըռչեն, մարեն, նըման կայծերի:
Մուգա, մի՛ յուսար արձագանք զրանել—
Միայնակ սըզա՛, միայնակ կոծիր...
Քո այդ հառաչքը ոչ ոք չի՛ լըսիլ...
Զու՛ր ես դու կարծում, թողի՛ր ցընորքներ:
Յուսահատ ձայնըդ թո՛ղ անցնի, սլանայ...
Բայց մըթութիւնից չեցէ՛ վախենայ...
Անմարդաբընակ անապատներով
Թող թըռչի՛... դռնի՛... լըռի՛ մըմունջով:
Մուգա, դու նման ես այն անբախտ բուին,
Որ միշտ տաղտկալից կանչում է մէկին...
Բայց լուռ է, խաւար, քընած է չորս դին,
Պատասխան չըկայ անյոյս վայվոյին:



Հ Ի Յ Ն Ի Ի Յ.

«Es stehen unbeweglich
«Die Sterne in der Höh'...»

Աստղերն անշարժ փայլում են,
Երկնից մեխած բիւր դարեր,
Միմեանց տըխուր նայում են,
Կասես, սրգում իրանց սեր:
Նրանք խօսում են իրար հետ
Քաղցրը հարուստ մի լեզուով,
Որը ոչ մի լեզուագէտ
Չի՛ ըմբռնի իր խելքով:
Բայց Դես շատ շուտ կարդացի
Եւ երբէք չեմ մոռանում—
Ես այդ լիզուն սովորեցի
Շնորհիւ եարիս աչերուն:



ՄԵՐ ԶԻՆՈՎՆԻԿԻ «ԵԹԼ»-ՆԵՐՐ.

«Սեօճրեաթըն շիրին վախտընդա, մօլթանըն
«ալլահ սախլասըն» —այսինքն— «հէնց խօսք
«ու զրուցի քաղցըր ժամանակն, թարսի պէս
«լըսւեց մօլթանու բարեն»»

ԹԻԻՐԳՅԱՆ ԱՌԱՄ.

Նմանողութիւն Պատկանեանին.

Թէ ունենայի հարիւր հազարներ,
Կամ թէ Կովկասում հող ու այգիներ,
Աբա՛ վըճուեցէք, ի՞նչեր կ'անէի,
Իմ «նիստ ու կացը» ո՞նց կըսարգէի:
Օրինակ, եթէ մայրաքաղաքում
Ունենայի ես ահագին տըներ,
Եթէ տըներըս տային հազարներ—
Ո՞նց քէյֆ կ'անէի—ինչպէ՞ս էք կարծում:
Էհ, շատ չեմ ուզում—թող ինձ ամսական
Տան երկու հազար եկամուտ միայն...
Աբա՛ մի ասէ՛ք—ի՞նչ կեանք կ'վարէի,
Ի՞նչպէս լաղաթին օրըս կ'անցնէի:

Գիտե՞ք, աշխարհում շատ կան հարուստներ—
 Աստուած փրլաւը տըւել է մէկին,
 Իսկ լաւ «իշտահը», «վըկուսը» միւսին—
 Օ, թէ երկուսն էլ մէկի պատկանէր:
 Այո՛... այդ յիմար հարուստի նրման
 Ես չէի կողպի ոսկիս սընդուկում
 Ու չէի փըթի կեղտոտ Գանձակում...
 Կ'թողնէի «տըւժբէս», «սուզը» յաւիտեան:
 Կինըս սիրուն է—փա՛ռք ըստեղծողին...
 Ես բախտաւոր եմ միայն էդ կողմից...
 Զաւակ էլ չ'ունեմ—այդ էլ իմանանք...
 НҮ-СҢ... եթէ ծընւի... դարձեալ չէ կապանք:
 Կառնէի կինըս, հեռու կ'երթայի...
 Աբա՛ իմացէք—ո՛ւր կըզընայի...
 Փրանսես', Պարի'զ... հասկացա՞ք հիմա...
 Ո՛չ... Լօնդօն ցուրտ է... Էնտեղ չեմ գընայ:
 Ծովով ահ է շատ—լաւ է ցամաքով...
 Մեծ քաղաքներում մի օր կըմնայի...
 Կայծակի նրման «շիկարնի» կառքով
 Կ'փայլէի յանկարծ ու... կ'չքանայի...
 Եւ այսպէս վերջը Պարիզ կ'հասնէի...
 Այնտեղ հոյակապ տուն կըվարձէի...
 «Շվէյցար» ու «կունիւլս», «կարէթ», «րիսակներ»,
 «Լակէյ» ու «պօվար» և այլ ծառաներ...
 Յետոյ... կ'անէի... ասենք, վիզիտներ...
 Միայն մի քանի «գիպլօմատ» մարդկանց...

«Էսպէս եմ... Էնպէս...» — կ'ասէի նորանց
 «Շատ մեծ ազդից եմ... պապս էլ մինիստր էր»...
 Իսկ յետոյ... բալէ'ր... շքեղ «վէչէրներ»...
 Ի պատիւ ինձի «պիկնիկ» ու «ճառեր»...
 Ի՛նքս արիստօկրատ լուրջ «մաներներով»
 Ու իմ «խորիմաստ», «երկմիտ» խօսքերով...
 Թի'ւ... чертъ возьми... զանգը քաշեցին...
 Էլ бѹдто ուրիշ ժամանակ չըկար...
 Հանդիստ չեն թողնում մարդուս իր խելքին...
 Զըլնի՛ր... եկել են... «վէքսելի» համար...
 Էդ զահուսմարի «սրօկն» էլ անցկացաւ...
 Է', фантазія!.. տե՛ս, թրտեղ հասաւ...
 Лидочка, душка... ո՞վ է—իմացի՛ր...
 Թէ «էն»... «նա» լինի... սուզը ուղարկի՛ր:



Հ Ի Յ Ն Ի Ի Յ.

«Warum sind denn die Rosen so blass,
«O, sprich, mein Lieb, warum»?...

Օ, ինչո՞ւ վարդը դունտա է այնքան,
Ասա՛, իմ քաղցրիկ, ասա՛ սիրական...
Ինչո՞ւ է համբը և անխօս ծաղկում
Կապուտ մանուշակն կանաչ դաշտերում:
Ինչո՞ւ է փրչում բալասան ծաղկից
Այգլախի մի հոտ, ասես, դիակից
Եւ ո՞ւմ է այնքան թախծազին երգով
Արտուտը կանչում, զերև ճախրելով:
Ինչո՞ւ է դաժան, ցուրտ ու խրատազին
Արեգի տըլած լոյսը մարգերին...
Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ մըռայլ է այնքան
Ամայի աշխարհն, ինչպէս գերեզման...
Ինչո՞ւ ես ինքըս հիւանդ եմ, արըտում,
Ասա՛, դու իմ սէր, սըրտիս անձկալին.
Ինչո՞ւ, օ ինչո՞ւ յուսահատ օրում
Թողեցիր դու ինձ, հեռացար, անգին:

ՄԿՆԵՐԻ ԱՊՍԵՄՐՈՒԹԻՒՆԸ.

(Առակ հին և նոր ժամանակներից.)

Ամառայ տօթ էր. արեզը խիստ վառ
Կապում էր անտակ երկընքում կամար.
Ծառի շըւաքում մեր «Փիսօն» պառկած՝
Նիրհում էր անդորր, բխերը սըրած:
Այն օր Փխոյի որսը աջող էր—
Ստամոքսը լի էր ու քէյֆն էլ քեօք էր...
Իսկ խեղճ մրկները սև սուզի միջում
Իրանց չար բախտըն էին անիծում:
—«Էսպէս էլ, ախպէր, պատուհաս կըլի...
«Էսպէս էլ քեամբախտ օր ու կեանք կըլի...
«Մի վերջ պիտի՛ տալ խայտառակութեան—
«Աւազակ կառւի բարբարոսութեան...»
Հէնց այդ վայրկենին, երբ լացում էին
Եւ մի ելք գըտնել աշխատում էին,
Նկատում են, տեսնում—մեր Փիսօն պառկած,
Գըլուխը հանգիստ թաթերին դըրած:

—«Ել ի՞նչ ենք սպասում, բանը յիս ձրգում,
 «Երկինքը ինքն է օգնութեան հասնում...
 «Քրնած է կատոն. . պատեհ ժամանակ...
 «Ե՛կ աղատութեան ծածանենք պօռալ» —
 Սատանան գիտէ—երկու բոպէյում
 Ժողովեցան այնտեղ բիւրաւոր մըկներ—
 Եւ ահա մէկը ամբօխի միջում
 Կամեցաւ յայտնել մի քանի մտաքեր...
 Հռետորին պատուով առաջ մըղեցին.
 Նա կանգնեց բարձր մի քարի վերայ.
 —«Ազնիւ եղբայրներ» — դարձաւ մըկներին
 Եւ ըսկեց ճառը, խրախուսանք իրա:
 —«Տարիներ անցան, նոյն իսկ և դարեր,
 «Բայց ամօթալի այս լըծի տակը
 «Տըքնում ենք դարձեալ, կըրում շղթաներ...
 «Սըրում ենք... կարծես, անվերջ է կրակը...»
 Մեր հռետորը «հոս» փոքրը ինչ կանգնեց
 Ու խոր հառաչանք կըրծքից արձակեց...
 Խուժանի միջով այդ հողուոյն անցաւ,
 Ամենի սիրտը տակն ու վրայ արաւ...
 —«Մեզանից քանի՞, ախ, քանի՞ հողիք,
 «Քանի՞ նա անմեղ լափեց երեխէք...
 «Մեր օրը նորա սեւացաւ ձեռքից,
 «Ահլ չի զընում երբէք մեր սըրտից:
 «Բայց կար ժամանակ, երբ մենք էլ ուրախ
 «Կապրէինք ազատ ու բընաւ անվախ...

«Մենք էլ ունէինք անւանի քաջեր,
 «Տէրութիւն ու թագ, ինչպէս այլ ազգեր:
 «Յիշում էք բիձուս—Պոչաւոր Սաքին—
 «Որ կաւալի մէջքով անվիհեր ցատկեց...
 «Սատանու տըղայ—մաղալու Գիւքին—
 «Որ տառի ձեռքից պանիրը խըկեց...»
 —«Ողորմի Աստուծ, քաջ մարդիկ էին—
 Խօսեց մի ծերուկ ծանօթ քաջերին—
 «Հէյ զիդի դունեա, տե՛ս, ճրտեղ հասցրին...
 «Էսպէս բան կըլէ՞ր, թէ որ ապրէին...» —
 «Իսկ այժմ մըտած բըներըս վախից,
 «Չըգիտենք, ի՞նչ է կատարում կեանքում...
 «Նա խըկեց, զըրկեց մեղ փառք ու պատւից...
 «Ախ, լոյսը անգամ չենք մըթնից ջոկում...
 «Վերջապէս, էլ ի՞նչ խօսեմ, ընկերներ...
 «Կայ, արդե՞ք, մէկը—ասածըս հերքէր... —
 «Մեղ իսպառ ջընջեց բըռնակալ Փիսին—
 «Այդ արիւնարբու, անգուսպ վայրենին:
 «Մենք աշխարհիս մէջ կորանք, իսկապէս,
 «Միայն առակի մէջ են մեզ յիշում
 «Եւ վախկոտ մարդկանց մըկներ անւանում...
 «Աբա՛ մինչև ե՞րբ լըռենք մենք այսպէս...
 «Մեր սըրած թուրը, փառաւոր անուն
 «Ծաղըանքին մատնեց անհողի կատուն...
 «Բայց ո՛չ... մեռած չե՛նք... վերցրէք մի-մի զէնք,
 «Գընանք Փիսոյին շանստոտակ անենք:» —

Ճառը վերջացաւ.
 Հռետորը իջաւ.
 Մեծ իրարանցում
 Տիրեց խուժանում.
 Մէկը հռետորին
 Կեցցէ է գոչում.
 Միւսը երրորդին
 Կասկած է յայտնում...
 Վազում են, կանգնում
 Գոռում են, կըռում,
 Յարդ ու քար բերում,
 Զէնքեր պատրաստում:

Մի խօսքով, վերջը տիրեց լըռութիւն.
 Կազմեցին զընդեր զինւած մըկներից.
 Աբա ձայների մեծամասնութիւնն
 Ատենաբանին զօրավար ընտրեց:
 Եւ ահա այսպէս «մէկ մարմին» զարձած,
 Մօտեցան նոքա շարէշար ծառին...
 «Ազգային հոգևով» մըկները վառւած,
 Խեղճ կատարի գլուխը ջախջախել կամին:
 Իսկ Փիսօն «անմեղ» իր համար ստերում—
 Դընչիկը խըրած մօրթու ծալքերում—
 Անուշ քընի մէջ մըկներ է տեսնում,
 Իր մահը բընտւ չի էլ գուշակում...
 Յանկարծ մի մեղու նըստեց ախանջին—
 Ո՞րտեղից որտեղ այդ չարաճըճին

Իմացաւ, որ մեր Փիսօյի գըլխին
 Խաթաբայայ է սարքւում ահագին—
 Իսկ որովհետեւ կատարի ախանջը
 Շատ է ըզգայուն, մանաւանդ ծայրը,
 Ուստի կիսաքուն մեր պարօն Փիսին
 Բարձրացրեց թաթը, որ քըշէ ճանձին...
 Մըկները տեսան... այն թնչ պատահեց...
 Զորս ոտ ունէին, մինն էլ փոխ առան...
 Զարգելով իրար, թափելով անէծք,
 Զէնք-բան ձրդեցին ու «մէքաշ» կորան...
 Տես, ճնայ այդ վառւած մըկները փախան,
 «Ազգային ճառը» խեղցն մոռացան...
 Բայց Փիսօն թաթն էր բարձրացրել միայն...
 Բա՛, որ վեր կենամր... էլ կսց պատասխան...



Ն Ա Գ Ս Օ Ն Ի Ց.

Թող ցայտէր գոնէ արցունք գետերով...
Ես չէի ջանայ առաջը կրտրել...
Գլուխըս կը գնէի բարձին գիշերով,
Կողքայի երկար դրուծիւնըս անել:
Ես կը լացէի մըռայլ ապագան,
Որ չըկայ մի յոյս վերանորոգման...
Եւ ինձ, որ շուտով դարձայ անտարբեր,
Սնկարող—յաղթել սեպհական վըշտեր...
Որ իմ զգացմունքը ինքըս եմ առում,
Որ իմ մըտքերը հէնց կ'ս եմ ծաղրում,
Որ արդէն մարդկանց լաւ եմ ճանաչում—
Նոցա և կեանքին այլ չեմ հաւատում...

ԱՇՈՒՂԻ «ՆԵՑՆԻՄ»-ԴԵՐԵՅ.

Օ, ո՛չ—սա երգ չէ, բախտաւոր տաղեր...
Սա ծարաւ ոխի է մի արձագանք...
Ձէ սա մանուկի անմեղ թոթովանք...
Սա մի «վայ-վոյ է», տառապած ձայներ...
Դուք մի՛ հրապուրւէք սահուն տողերով—
Նոքա լըցւած են ճընշւած ախերով...
Դուք մի չը լանաք ձայնի նրբութեամբ—
Ձայնը բուրում է թոյնի աղւուծեամբ...
Քընարիս հանած անգուստ զոչիւններ
Թող ձեզ չը խաբեն մեծ-մեծ յոյսերով...
Նորա համարձակ ու ջէհէլ լարեր
Կըտրում են մէկ-մէկ կոպիտ ձեռքերով...

ՍՕԿՕԼՈՎԻՑ.

Ինչո՞ւ աչքերիս, մոռալայի իմ, կրկին
 Յայտնեցար քո այդ շրջանող փայլով...
 Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ ազդու երգերով
 Խըռովում ես ինձ այս կէս զիշերին:
 Ես վաղուց կորցրի հաւատ փրկութեան,
 Վաղուց կապեցաւ իմ անվախ լեզուս...
 Հարւածոց, ճընշման տակը ծանրութեան
 Մընջեցին քնարիս լարերը անյոյս:
 Ես ընտելացայ ու չեմ բողբոջում,
 Քարշ տալով շղթան, հէնց կարծես, թըմրած...
 Սակայն ինչո՞ւ դու իմ հանգած սրբաւում
 Ցանեցիր շրփոթ—վաղուց հանդարտած...
 Երկնային լոյսը ձեռքիդ լապտերի
 Լուսաւորեց ինձ այս մութը բանտում,
 Մի դող ըզգացի, ժանգոտ օղերի
 Երբ ձայնը ցրուեց խոնաւ խորշերում:

Եւ մոռլաս քրէքուշ, իր սուրբ մատներով
 Թափանցիկ դարձրեց ահեղ պարխապներ...
 Նա ինձ հարկադրեց նայել բաց աչքով,
 Վեհ ազատութեան լըսել գոչիւններ:
 Եւ հրպարտ սիրտըս առաջւայ յոժով,
 Թըռած օրերի գոռոզ յատկութեամբ
 Ըսկըսեց արօփել արագ բաղխումով,
 Մըղկել զէպ լոյսն բոլոր զօրութեամբ...
 Ես շրփոթեցի, կամրեցի սաստիկ,
 Երկաթի խըռպոտ ձայնը լըսելով...
 Ես ամաչեցի, երբ մոռլաս նեղլիկ
 Ներս սողաց ինձ մօտ փակ դռան ճեղքով:
 Բայց, ախ, անդօր եմ երկաթը փըշընլ,
 Բանտիս պատերը չեմ կարող քանդել...
 Մոռալայի իմ, տասն, ինչո՞ւ յայտնեցիր,
 Ինչո՞ւ ըստրկին քընից զարթեցրիր:



ՊՕԼԵՏԻ ԿՈՂՄԻՑ.

„Если честно скорбишь ты, и честно усталъ,
„Отдохни надъ страницей поэта . . .“
Надсонъ.

Եթէ տանջւած ես հազար մի վաշտից,
Կեանքի անվաճիւ բիւր-բիւր հարցերից,
Եթէ զըզւում ես ու տարակուսում,
Մի բոպէ հանգիստ առնել ես ուղում:
Եթէ դու քեզ թոյլ անդօր ես ըզգում,
Երկաթի ձայնից սոսկում ես, սարսում,
Եթէ խոցւած ես անթիւ վէրքերով,
Հիւանդ ես սրբաով ու մեռած հոգւով...
Դընա՛ նորա մօտ... նա այդ կրբութէ,
Կիսաշունչ մարմնիդ նա դարման կ'անէ,
Քեզ ընկերաբար նա ձեռքը կ'ապրդէ,
Քո թոյլ հոգւոյ տեղ ուժեղը կրդնէ...
Նա իր քընարի զգայուն լարերին
Կըշընչէ սփոփիչ, երգեր երկնային...

Յետոյ կըփրչէ եռանդ քո սրբաին,
Նոր սէր ու նոր յոյս—յաղթել խաւարին:
Եւ քեզ կըտանէ իր հետ պատերազմ—
Այն չար ու բարւոյ անկերջ պատերազմ—
Նա քեզ կըմըղէ գընալ յառաջել,
Սուրբ ձեռքումդ կապանքներ ջարդել:
Քեզ իդէալի կ'յանձնէ դրօշակ,
Որ անցնես ձեռքիդ արիւնի լըծակ...
Թըշնամու նետը կըրծքովդ բռնես
Եւ ըստրուկ եղբարց ցեխիցը հանես:
Պօէտի դու հետ, այնտեղ միասին,
Կընկնէք, մեռնելով յանուն ճըշմարտին...
Եւ կըզգաս անչափ բերկրանք քո սրբաում,
Երգելով. «Վաղ-ուշ գարուն է ծագում»...



ՆԻԷՐ Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒՆ

(Իր յօրելեանի առիթով.)

Մի մըշակ է մեր պարտիզում
Արիաջան աշխատում,
Օր ու գիշեր բաճը ձեռքում,
Բընաւ դադար չէ առնում:
Ո՛րքան սիրուն ծաղիկներ ցանեց
Եւ պրտադատու նոր ծառեր,
Բայց և ո՛րքան նա դուրս հանեց
Փըթած, անպէտք մացառներ:
Դատարկ այգին նորա շնորհով
Կենդանութիւն ըստացաւ,
Անոյշ-անոյշ մըրգեղէնով
Մեր ամբարը լըցւեցաւ:
Ես ու եղբայրս շատ ենք սիրում
Մեր այդ ազնիւ մըշակին,
Միշտ զընում ենք ականջ զընում
Նորա խելօք զըրոյցին:

ՄԱՐՏՈՎԻՑ.

(Նւէր մօրս—Ե. Բ.)

„Ни красотою, ни роскошью наряда
„Ты не прельстишь, отчизна, никого. . .“
Мартова.

Դու չես զրաւիլ, իմ հայրենիք, դեղեցկութեամբ ոչ ոքին,
Տըխուր դէմքով, սե շոր հագիլ—դու օտար ես ամենքին.
Քո արցունքը թէպէտ խորթ են ուրախագոյաց շըրջանում,
Բայց և այնպէս սիրտըս միայն քո սուրբ անւամբ է
տրոփում:

Դու կեանքիդ մէջ ո՛չ մայր էիր, ո՛չ երջանիկ ամուսին...
Քաղցած օրեր, ըսաւրկութիւն—ահա՛ այդ էր քո բաժին...
Անբախտ որդիքդ կամ պիտ լըռեն, բութ հեղութեամբ
համբերեն,
Կամ զայրանան և դաշտ ելնեն, մահը լըծից վեր դասեն...



ՆՈՐ ԼՈՒԻՆԻ ՏԱՃԿԱՆՑԱՍՏԱՆԻՑ.

Ասում են, հայր վերջապէս յոգնեց,
 Ուզում է դառնալ մայրենի երկիր.
 Մեծ-մեծ գանձերով քրտակը լըցրեց.
 Հայրենիքում միշտ մընալ է մտադիր:
 Ես չեմ հասկանում. բաց ի՞նչ են դռում
 Ամեն օր լրագիրք. «Հայ էսպէ՛ս... Էսպէ՛ս...
 «Հայր խումբերով դաղթում է... փախչում,
 «Տուն ու տեղ թողած, երեսերքն լալիս...»
 Լուր է տարածւել, թէ իբրեւ հայերն
 Հաւաքւելու են իրանց աշխարհում.
 Մեծ քանակութեամբ վառօդ, հրացանների
 Առած գրնում են—բնակւել Արմենիում:
 Ասում են, էլ նրանք չեն ուզում լինել
 Ստրուկ ու հպատակ տաճիկ իշխանին...
 Վստփած, կատաղած վազում են կանգնել
 Կորուսած փառքը հին հայաստանի:
 Դարձեալ հանելուկ... ինչո՞ւ Եւրոպում
 Այդ քաղաքական անցքը չեն լըսել...
 Ինչո՞ւ են լըսել, չե՞ն քննադատում...
 Երեւի, փոստը շատ են ուշացրել...
 Մի բան եմ էլի լըսել մօտերումս.
 Հայր վերջապէս, ուզում է ստեղծել
 Դրադարաններ ու համալսարան...

Մասնագիտական զրպրոցներ հիմնել,
 Ամեն քաղաքում մի-մի տըպարան:
 «Զարչիութիւնը» թողնել է ուզում—
 Դա անաղնիւ են այժմ համարում...
 «Արհեստ ու հողը» իրա բընաբան
 Ուզում է դարձնել այժման դրութեան:
 Հիմայ հայերը ըսկսում են մրտցնել
 Ընտանիքներում մայրենի լեզուն,
 Տաճիկ բարբառով զըզւում են խօսել,
 Հայու հոգւով են կրթութում տըղերուն:
 Հէնց դորա համար, ինչպէս լըսեցի,
 Կամին ըստեղծել բուն հայ զրպրոցներ,
 Արտասահմանում ուսանողք պահել,
 Որ ունենան միշտ լաւ ուսուցիչներ:
 Վերջապէս, լսեցի—զօրք են հաւաքել
 Եւ Թիւրքիային պատերազմ յայտնել...
 Եւ այդ զօրքերը յանձնել են իրանց
 Զէնքի մէջ վարժւած նորուս տըղերանց...
 Պօլսում կըտիրէ մեծ իրարանցում:
 Սուլթանը ահից Բերլին է փախել...
 Խեղճը չըգիտէր—թէ ի՞նչպէս և ո՞ւմ
 Զեռքը օգնութեան աղերսով մեկնէր...
 Ամբողջ Թիւրքիան դեղնել է վախից...
 Հայերը զինւած սարսափ են ձըզում...
 Սուլթանը ցնորւած արցունք է թափում—
 Խեղճը յոյս չունի փրկւել անկումից:

Հայու բանակը, ասում են, արդէն
 Նա ուղարկել է մի խումբ զեսպաններ,
 Որոնք Հայերին պիտի աղաչեն—
 Թիւրքաց սահմանից դուրս Հանել զօրքերն...
 Իբրե թէ նոքա համաձայնել են
 Տալ Արմենիային ինքնավարութիւն,
 Միայն թէ անբախտ Արդու-Համիտին
 Խեղճ զան... Թողնեն այս խայտառակութիւնն...

*
 *

Վըկայ է երկինք, ես չեմ հաւատում,
 Մանաւանդ էս նոր վերջին խաբարին...
 Պատճառ մի հայ մարդ օրը-կէսօրին
 Տեսել է հրայան... ու... փրչել հոգին...
 Ուրիշը պատմեմ մի լուսնեակ զիշեր
 Փողոցում մի հայ զէնքումը մըտած—
 Երկար սուր, խնջալ, երկու բէվօլվէր—
 Մի խօսքով, «իզիթ»—բեխերը սրած:
 Կոնծած էր մի քիչ, բայց էլի անվախ
 Ձքօսնում էր մենակ ու երգում ուրախ...
 Յանկարծ... իր սաւերը աչքովն է ընկնում...
 Ձէնք-բան թողնում է ու «Հայդէ»... փախչում...
 Խեղճը իր սաւերը տաճիկ է կարծել...
 Ա՛յ, թէ՛ գիտնար, որ սաւեր է եղել...
 Իսկոյն բէվօլվէր վերան կ'արձակէր
 Եւ իր «կէռ-թըրով» շանսատակ կ'անէր...

ԵՇՈՒՂԻ «ՆԵՑՆԻՄ»-ԴԵՐԵՅ.

Եթէ դու մի օր լըսես հառաչանք—
 Դառն, սրբառուչ—մի անյայտ տեղից...
 Եթէ քո ուշքը դրաւէ հեկեկանք—
 Խեղդւած ու ծածկւած մի մոլթ անկիւնից.
 Եթէ դու տեսնես բարձր ամբօխից
 Երկու վառվռոռն աչքեր զիտելիս...
 Եթէ նրկատես խրոթիտ պատանուն
 Կուրծքը դէմ արած տուջ զընայիս.
 Եթէ դու կեանքի ահեղ ովկեանում
 Տեսնես մի նաւակ արագ լողալիս...
 Եթէ նաւորդը կատաղած ծովում
 Տեսնես ալիքներ անվուսպ ջարդելիս,—
 Գիտցի՛ր, մարդկային դա մարդարէն է,
 Որ ուղարկւած է խաւարը ցրել.
 Լոյսի, արդարի դրօշակը պարզել.
 Սըտութեան դիմում անվեհեր կըուել:

Եթէ դու տեսնես խուժանի միջին
 Գոշում է բարձրը մի երիտասարդ,
 Եթէ նա ձեռքը սեղմած է կրծքին,
 Որը կրծծում է թոքախտի չար որդ.
 Եթէ զայրացած խուժանը, տեսնես,
 Ուզում է պատռել, կործանել նորան...—
 Վազիր, յառաջիւր—օգնութեան հասնես...
 Նայի՛ր, քարերը թրուշում են վերան:
 Եթէ դու ազգի խաւարած բեմում
 Տեսնես այն նիհար, մաշւած պատանուն,
 Հապտերը ձեռքին, արիւնը բերնում,
 Քաշացած ձայնով տալիս մի անուն,—
 Գընա՛, մօտեցիր, նրա ձեռքը սեղմի՛ր.
 Բայց կարեկցութիւն չըսխալես յայտնել.
 Նա խիտ հըպարա է. նա այդ չի տանիլ.
 Դու միայն նայի՛ր ու լուռ հեռացիր:
 Իսկ երբ կըզրանես նորան, վերջապէս,
 Մի մոլթը, անշուք սենեակում ընկած,
 Հիւանդ, շընչասպառ չոր գետնին պառկած
 Բերանից արեան լերդեր թափելիս...
 Երբ որ վարմացմամբ դու տեսնես նորան
 Քայքայւած կրծքին սեղմում է քնարը
 Ու զարկում ջարդւած, կըտրած լարերին
 Մի վերջին աղօթք... մի հրաւեր վերջին...
 Ախ, երբ կըտեսնես, որ նա յառել է
 Կիսամար աչքերն անորոշ կէտին—

Անտէր, միայնակ, մահւան ճանկերին—
 Եւ վերջին ըոպէն մօտ է... հասել է... —
 Դիտցիր, որ այդ վաղահաս մեռնողն
 Քարկօծած, խրուկւած այն մարգարէն է,
 Բըռնութեան, մըթնի դէմ առ դէմ կըլուողն,
 Սուրբ իդէալի զինւորն էր ընտրեալ...
 Նա քաջ էր, անվախ, բայց միայնակ էր—
 Սմթօխը կոյր էր, նըրան խաչ հանեց...
 Վերջին անգամն էր... նա մի երգ նւագեց—
 Դառնագին երգը դեռ կիսատ մարեց:
 Հանդա՛ւ... Հ'մօտենա՛ս... Հեռից վարմացի՛ր...
 Գովի՛ր... չըխըղձա՛ս... ովսաննա կանչի՛ր...
 Նա մարտիրոսուեց ճըշմարտի համար,
 Նա տարաւ տանջանք, տանջանք անհամար:
 Սակայն դու նորա անշունչ դիակին
 Զըհամարձակես լացել, հառաչել...
 Նա այդ կըլըսէ... ատում է թոյլին...
 Նորա գէվիզն էր—միշտ հըպարա տանջւել...



ՕՏԼՐ ՊՕԷՏԻՆ.

Դու, օտար պօէտ, մի՛ հպարտանար,
Ազգիդ փառքովը դու մի՛ պարծենար.
Զրկարծես, թէ ես մի օր կ'նախանձեմ,
Բո տեղ մի վայրկեան ես լինել կ'ուզեմ:
Ո՛չ, դու սխալուում ես, չարաչար սխալուում:
Փառաւոր զիրքըդ ինձ չէ հրապուրում..
Բո զըլխին դարսած ոսկէ պըսակներ
Երբէք իմ սրբոխ նախանձ չեն ծըներ:
Ասենք, թէ ազգրդ—ազատ, երջանիկ—
Բերկրութեան մէջ է իր անկախ երկրում..
Թո՛ղ քո ազգայինք ազնիւ են սաստիկ,
Ունին մեծ հրօշակ ամբողջ աշխարհում:
Թո՛ղ քո երկիրը ունի թընդանօթ,
Մեծ-մեծ պահեստներ—զընդակ ու վառօդ—
Եւ քո քաջ ազգը դէմ դրնէ անթիւ,
Բիւր լէզիոններ թըշնամու առջև:
Թո՛ղ լինի ծաղկած ազգիդ գիտութիւն,
Ունենայ լայն ու ձոխ գրականութիւն,

Թո՛ղ քո զիւղացին կարգայ լըրագիր
Ու քըննադատէ Բիսմարկի ճառեր:
Թո՛ղ ազգրդ կանգնէ քեզ համար արձան
Ահեղ մեծութեամբ, ապրող յաւիտեան..
Քեզի «ովսաննա» կանչելով տանէ..
Իրա ուսերի վերայ նըստացնէ:
Թո՛ղ ազգըս ինձի արձանի տեղը
Փորէ մի՛ նեղլիկ, փոքրիկ զերեզման..
Թո՛ղ ինձ քարկոծէ անմիտ ամբօխը—
Նա կոյր է, անկիրթ—առանց խրատութեան:
Թո՛ղ նա չ'ունենայ ո՛չ սուր, ո՛չ նիզակ,
Թո՛ղ ըստրուկ լինի տաճիկ իշխանի,
Զունենայ ազատ զըրիչ ու «զանգակ»,
Անյայտ է, մոռցած, առանց «երանի»:
Բայց էլի ես քեզ չեմ նախանձելու,
Բախտաւոր պօէտ օտար ազգութեան..
Դու զարկիր քնարիդ—ուրախ երգելու,
Ես պիտի սրդամ բախտը հայութեան:
Դու երգիր անհոգ գալուստը դարնան,
Ես պիտի նւագեմ «ողբ առ հայաստան»...
Փառքով-պարծանքով դու վաղիր զիմաց,
Դովեր յաղթութիւնք քո ազգի քաջաց.
Ես պիտի ծածուկ զիշերով գընամ,
Մեռած Վարդանի շիրիմը սրգամ..
Մըթութեան միջին գույէ չըգրանեմ,
Սակայն բիւր հանգած հերոսներ կ'տեսնեմ:

Նոցա ստւերները մըռայլ խաւարում
 Շրջում են, գիտեմ, Աւարայր դաշտում...
 Ես այն ձեռքերը—դեռ արնաթաթախ—
 Պիտի համբուրեմ անյագ ու անվախ:
 Թէպէտ ես պիտի արիտը քրնարիս
 Շընչեմ միշտ երգեր, ձայներ սրգալից...
 Սակայն քեզ, օտար, չեմ նախանձելու...
 Պատճառ մեր աստղը շուտ է փայլելու...



ԹՈՉՆԱԿԻ ՄԱՀՐ.

Մեռաւ փոքրիկ թռչնակը
 Անհաւասար մի կըռւում...
 Եւ ընկաւ նա ծառի տակը—
 Մանուշակի թաղերում:
 Երբ որ անգութ ու գիշատիչ
 Յարձակեցաւ թռչնամին,
 Նա վըճըռեց իրա բընից
 Զըհեանալ բընաւին:
 Եւ չըճըռեց փոքրոգութեամբ
 Իր թանգագին գերդաստանն...
 Մեռաւ ազնիւ, հըպարտ մահւամբ,
 Դէմ կանգնելով բըռնութեան:
 Նա կըռւեց քաջ—կըռւեց անվախ,
 Պաշտպանելով ձագերին...
 Յաղթեց... մեռաւ, սակայն ուրախ,
 Որ կեղտ չ'գիպցրուց իր պատւին:
 Նա իր մահւամբ սպառնանք կարդաց
 Հըզօրների հասցէին...
 «Պիտի՛ մեռնենք—և անկասկած
 «Յարգել կըտանք թոյլերին»...



ԱՌԱՐԱՅԻ ԳԼՈՏԸ ԿՈՒԻՆ ՆԱԽԸՆԹԱՑ ԳԻՇԵՐԸ.

Պ Ա Տ Ն Ե Ր

I.

Գիշեր է արդէն—պայծառ ու հանդարտ.
Մի կասկածելի, լարւած լռութիւն.
Կարծես, իր խաղաղ գէմքով բընութիւնն
հեղեղեց առաջ խաբում է աշխարհ:
Աւարայր կոչւած յայնարձակ դաշտում,
Տրդմուտ գետակի այս և այն ափում
Շրջում են անձայն մի քանի սուերներ
եւ հըսկում ցրւած գոյնըգոյն վրաններ:
Երկինքը կապոյտ—ճակատը անամպ—
Դիտում է, կարծես, մտախոհ լռութեամբ...
Աստղերը տըխուր, թէպէտ և պայծառ,
Տըխուր և ամբողջ դաշտն Աւարայր:
Մի խուլ խրոմփոյ քրնած մարդկերանց,
Խառնելով գետի խըշշացող ձայնին,
Երբեմն ամփոփ լռւում է հեռանց
Այդ խորհրդաւոր գիշերւայ ժամին:
Մերթ ընդ մերթ հեռւում մըթութեան միջին
Վառւում է արէթն ու մարում կրկին...

Լըսւում է յանկարծ մի խոր հառաչանք
եւ ինչ որ ծանրը, երկար ճրրբանք...
Կոյտերը անկարգ, անխնոն թափւած.
Մարդիկ զէնքերում չոր գետինն պառկած.
Նընջում են բոլորն—անհոգ ու անգործ...
Նընջում են քընով, ասես, բախտաւոր:
Միայն պահապանն, յենւած նիզակին,
Յոգնելով մի տեղ դանդաղ շըրջելուց,
Մոռացած իրան, նայում է հեռին,
Ուր ջուրը պըսպղուն ցայտում է գետուց:

II.

Շուտով կըզարթնի այդ ամբողջ բանակ—
Պարսից ու հայոց—պատրաստուել կըուին.
Մի ժամից զույգ նետըն ու նիզակ
Պիտի փըշըրէին մարդկանց կողերին:
Առաջ կըտիրէ թեթեւ մի շարժում
եւ կիսակրտոր մի իրարանցում:
Կըհընչեն փողեր, դրօշակք կ'ծածանեն,
Երկու կողմերը գէմ առ գէմ կ'կանգնեն:
Դաշտը կըլըքցի յանկարծ աղմուկով
Ու խառնիճաղանճ հարայ-հըրոցով...
Մի տեղ կըլըսեն ուրախ կեցցէներ,
Միւս տեղ մահամերձ, վերջին հոգւոցներ...
Տրդմուտ գետակը կըփըքւի դանդաղ,

Սրեան վրտակներ անյագ խրմելով...
 Անգոյն ջրերը կրկարմրին, աւաղ,
 Դիակների հետ անմիտ խաղալով:
 Հողը կրծրծէ արիւնը վօթած,
 Քարերը նոյնպէս կրներկւեն արնում,
 Որ իրենց տեսքով քաջութիւնք նախնեաց
 Յիշեցնեն թրմրած ապագայ հայուն...
 Եւ «անոյշ բըլբուլն» Աւարայր դաշտին
 Կ'յօրինէ մի ողբ—նըւազ տըխրագին—
 Եւ ողբը անշուշտ կ'անցէ դարէ-դար—
 Սերընդից սերունդ աստիճանաբար:
 Պարսիկ կը ջանայ ջընջել հայերին—
 Նոյա դաւանած կրօն ու ազգութիւն—
 Հայերը պիտի' անպիհներ մեռնին,
 Ժառանգելով «սուրբ քաջերի» անունն...

III.

Բանակիցը դուրս, Տըղմուտի ափին,
 Քահանայական սեւ փարաջայում
 Մի ծերուկ չոքած ու խաչը ձեռքին
 Մըմընջում է խուլ... ասե՛ս, աղօթում:
 Մազերը փրուած նիհար լանջերին
 Օղակաձև ու սպիտակ ծալքերով:
 Հայեացքը վառւած ու յառած երկնին...
 Դէմքը փառահեղ երկար մօրուքով...

*
*
*

—«Ո՛վ, Տէր Աստուծ—անհաս, անհուն—
 «Քանի՞ փորձես դու հային...
 «Տէր, նա ունի համբերութիւն—
 «Մեռնել Քո սուրբ անունին:
 «Դարեր անցան... արիաբար
 «Նա պաշտպանեց Քո դաւանք...
 «Դարեր անցան... նա անհամար
 «Կըրեց թուք, մուր, տառապանք:
 «Ընկած թողեց սուրը արքան,
 «Գրեկեց սրբոց սաղմոսներ...
 «Ձրգեց երկիրն առանց պաշտպան
 «Եւ հեռացաւ մութ պրեր...
 «Անցան հինգ դար .. ինչքան արիւն
 «Զոհեց հայր Քո խաչին...
 «Եւ մի՞թէ այս առկունսութիւնն
 «Չ'շարժեց գութը Արարչին:
 «Նա մոռացաւ կինը, որդին,
 «Տուն ու տեղը և այգին ..
 «Նա հրաժարեց երկրիս փառքէն
 «Դարձեալ յանուն սուրբ խաչին...
 «Ո՛րը թըւեմ, Տէր զըթառաս,
 «Ի ապացոյց հեղութեան...
 «Ուրքան քաղաք, շէնք մարդաշատ
 «Սւեր դարձան, քանդուեցան:
 «Եւ այս բոլոր աղէտները,

«Անպատմելի տառապանք
 «Լուռ-մոռնջ տարան հեղ հայերը,
 «Որ հայցեն Քո «հանդերձ կեանք»...
 «Այժմ դարձեալ պարսիկն բառնաց—
 «Մեր լոյս-հաւասն ջընջելու...
 «Հայը կրթիկն նոցա առաջ
 «Կանգնեց անվախ մեռնելու:
 «Տէր, թող լինի սա Քո վերջին
 «Փորձը ազգիս հեղութեան...
 «Տէր, մի՛ հասցրու անբախտ հային
 «Մինչև ծայրը կորըստեան:
 «Օգնի՛ր Վարդան—Մամիկոնին
 «Փառքով քրչել թըշնամուն...
 «Դու պարզելիք նորա բազկին
 «Անընկձելի ամբուլթին:
 «Իսկ ծառայիդ Քո, Ղևոնդին,
 «Շընչի՛ր հողերդ սուրբ լեզուն,
 «Որ նա օրհնէ իր խեղճ հօտին,
 «Փառարանէ Քո անունն...»

VI.

Այն ո՞վ է արագ վրանի առաջին
 Պարսկաց բանակում վերդովված քայլում...
 Ինչո՞ւ է յուզւած—ամպը ձակատին—
 Մերթ ընդ մերթ կանգնում ու բարձրը խօսում:

Նորա թուխ դէմքը խըրոխտ աչքերով,
 Յաղթանդամ մէջքը քաջառողջ մարմին,
 Խոշոր հասակը խոշոր ձեռքերով
 Յիշեցնել կրտան դոռ լեռնականին:

*
 *

—«Ուրացող Վասակ... մատնի՛չ հայրենեաց...
 «Փառասէ՛ր... կեղտո՞տ... ազգի դաւաճան...»—
 «Թո՛ղ կոչէ այսպէս էջը պատմութեան
 «Վասակ իշխանին ի լուր յեանորդաց...»
 «Թո՛ղ անիծէ իմ ծընունդն աշխարհում
 «Քահանան սրբոց գիրքը կարդալիս...
 «Թո՛ղ ինձի ծաղրէ տըղան զըպրոցում...
 «Հայ վիպասանը երգ յօրինելիս...
 «Մայրը իր ուղուն օր-օր կանչելիս
 «Թո՛ղ պատմէ արարքն միայն Վարդանի...
 «Թո՛ղ երեսային հայը կընքելիս
 «Վասակ անունով երբէք չ'անւանի...
 «Թո՛ղ չարչարեն ինձ զեերը դժոխքում—
 «Ահագին երկանք կախն շըլընքիս—
 «Թո՛ղ այրեն, մաշեն կրպրի կարասում,
 «Ծաղրելով ազնիւ Սիւնեաց իշխանիս...
 «Փոյթ չէ՛... վաղը ոսոխքըս կ'ընկձին
 «Եւ իրենց արնով դաշտը կ'ողողին...
 «Պարսիկը անշուշտ կը քանդէ տաճարն—
 «Մեր մեծ թըշնամուն, Քրիստոսի տաճարն...
 «Հայաստանի մէջ չի՛ ծրխւի կընդրուկ.

«Այլ չէ՛ն լըսելու «հոգեզմայլ» երգեր.
 «Սաղմոս մըմընջալ կրմոռնայ ծերուկն.
 «Այլ չենք ունենալ «ճըզնաւոր» պետեր...
 «Ղողանջող զանգը կրօնամոլ հային
 «Ձէ այլ կոչելու աղօթել Տէրին...
 «Վանքերի տեղը ամրոցք կըբուսեն,
 «Վախկոտ տիրացուք զինուոր կըփոխեն...
 «Բայց... եթէ... յանկարծ... պարսիկը յաղթւեց...
 «Եթէ ամօթով սահմանից քըշւեց...
 «Եթէ... չըհասայ ես իմ «մուրազին»...
 «Եւ... ընկայ... մեռայ այս դաշտի միջին...
 «Օ, զարհուրելի, կատաղի մըտքեր...
 «Եթէ յոյսերըս չիրագործւեցին...
 «Բայց... միթէ՞ ուշ է... քաւել իմ մեղքերն...
 «Փախչել... միանալ ազգիս բանակին...
 «Երեխայ... ծրծկե՛ր... աբա... արտասու՛ի՛ր...
 «Ամօթ... դ՞ուրս—Վասակ—մահուց սարսեցի՞ր...
 «Լըսի՛ր, իմ ներքին անխոհեմ դու ձայն—
 «Իմ սիրտըս ի զուր դու մի պըղտորիր...
 «Ճող չէ՛, հայերը թող անէճք կարգան
 «Սիւնեաց իշխանի բըռնած ուղղութեան...
 «Թո՛ղ փառաւորի Վարդանը միայն—
 «Այն «կրօն-ազգութիւն» պոռոզ երեսան...
 «Ճեռու չեն... կըզան ցանկալի ժամերն,
 «Երբ կըկատարւեն իմ գաղտնի մըտքերն...
 «Եւ հայաստանը ոտքերըս ընկած

«Պիտի համբուրէ՛ հաղուստիս ծայրերն...
 «Թո՛ղ կորչէ Յոյնը իր անմիտ կրօնով—
 «Նա տանում է մեզ անդունդը մահւան...
 «Ես կամիմ ստեղծել պարկայ զօրքերով
 «Մի նոր ու զօրեղ, անկախ հայաստան...
 «Բաւ է, ինչ Յոյնը մեզ խաբեց երկար,
 «Կրօնի զօրութեամբ շըղթաներ դարբնեց...
 «Իշխանների մէջ շըփոթ սերմանեց,
 «Հարեց իրար դէմ, դարձրեց խռովարար...
 «Եւ զարմանալի խորամանկութեամբ
 «Խառնելով ջուրը հայոց աշխարհին,
 «Ուռկանը ձեռքին սառնասրտութեամբ
 «Ուսաց նա յիմար, անխելք ձրկներին...
 «Այժմ թող իշխանք միանան կըրկին
 «Եւ սիրով սպրեն իմ ձեռքին տակին...
 «Պարսկին հեռացնել զիւրին է շուտով,
 «Թէ միայն ազգըս զօրանայ հոգւով...
 «Լըսի՛ր, ո՞վ Երկինք, հըզօր Վասակին—
 «Սիւնեաց իշխանի այս տըւած խօսքին...
 «Թո՛ղ սարեր ճայթեն և ինձ խորտակեն—
 «Դարձեալ չեմ շեղւի իմ ընտրած ճամպէն...
 «Եւ դու, հայ աշխարհ, իմացած եղի՛ր,
 «Որ թագով պիտ' ինձ մի օր պըստկես—
 «Իսկ այն Վասակին, որ անիծեցիր,
 «Փառքով-պարծանքով պիտի հանդիպես...»

ԽՆԴԻՐ ԳԻՇԵՐԻՑ.

Ահա վերջացաւ օրը, լի ցաւով,—
 Սարեր ու մարգեր ըսկըսան նիրհել,
 Մեր փոքրիկ պարտէզն քաղցրը բուրմունքով —
 Վարդ ու շուշանի—ըսկըսեց շքնչել:
 Անտառից ծագեց փառահեղ լուսին
 Եւ աղօտ լոյսը չորս կողմը սրփռեց...
 Թըփերի միջում իր ձագուկներին
 Մայր-թըռչունն անոյշ օրօրանք երգեց:
 Իսկ զիժ վեփիւռը, խայտալով դաշտում,
 Ձի թողնում հանդիստ սիրունիկ ծաղկանց...
 Մերթ հանդարտում է, կարծես, նընջում
 Եւ մերթ բարձրանում, վազվըղում յանկարծ:
 Խաղաղ է աշխարհ, խաղաղ է բնութիւն,
 Ոչինչ չէ քակտում ներդաշնակ դրութիւնն...
 Մի քանի աստղեր, իսկ այնտեղ լուսինն
 Ձգանում են հեղիկ երկընքի ծայրին...
 Աքանչելի գիշեր, աննրման գիշեր,
 Ո՛րքան սրփոփիչ ոյժ կայ քեզանում—
 Դու մեղմացնում ես կեղեքող վըշտեր,
 Դու այրած սըրտին զով ես պարգևում...
 Ձըմոռնաս, գիշեր, երբէք թըշուառին,
 Որ տանջւում է լուռ, տանջւում է անքուն,
 Ուղարկի՛ր նորա յոգնած աչքերին
 Դու միշտ փըրկարար, անխըռով մի քուն...

ԺԱՆՈՒԿԻՆ.

(Դսերէնից, նմանողութիւն.)

Տեսնում ես, մանուկ, երկընքի վերան,
 Ինչպէս այն ամպը լողում է հանդարտ,—
 Անծանօթ է նա բընաւ սարըկաթեան
 Թըռչում է օդում ազատ ու անդարդ:
 Բայց, աւանդ, ամպը չէ այն երջանիկ,
 Թէեւ ազատ է եթերի միջին...
 Ամպը չէ կարող, իմ անմեղ մանկիկ,
 Քեզ պէս մըտածել ու սիրել Տէրին:
 Աբա... մի նայիր աստղերի խմբին—
 Տես, յորքան նոքա փայլում են պայծառ...
 Ասես, թէ ոսկու կըտորներ լինին—
 Ճաշակով շարած երկնից կամարին...
 Բայց արեւիքից կ'ելնէ արեգակ,
 Կըհանդգեն մէկ-մէկ աստղերը շուտով,—
 Եւ այդպէս կըմնան անդորր շարունակ,
 Կըփայլեն գիշերն, կ'մարեն ցերեկով,
 Երբէք չըզգալով, չըմըտածելով...

Տեանում ես այնտեղ կանաչ դաշտերում
 Գոյնըզգոյն ծաղկունք խոտերի միջում—
 Վաղ-առաւօտեան ցօղի տակ ծածկւած
 Տատանում են մեղմ զեփիւռի առաջ...
 Բայց շուտով կրգայ ձրմեռն ահալից
 Եւ ծաղկունք, աւաղ, կրմեռնն ցըրտից...
 Անբախտ են նոքա, որ զուրկ են սիրուց,
 Որ զուրկ են բընաւ մտածելու շնորհից...
 Եւ դու, իմ մանկիկ, նրման ես ամպին
 Քո այդ թըռթըռան, սպիտակ ձեռքերով,
 Դու գեղեցիկ ես—նրման տատղերին—
 Քո պայծառ, սիրուն, ժրպտող աչերով...
 Բայց դու աւելի բախտաւոր կըլինես,
 Քան ամպը, աստղը և այն ծաղիկներ...
 Դու կեանք կըմըսնես, դու կըհամոզես,
 Որ պէտք է «սիրել», պէտք է «մըտածել...»



ԱՇՈՒՂԻ «ՆԵՑՆԻՄ»-ՆԵՐԵՅ.

Մըտայ ծաղկոյ քաղել ծաղիկներ,—
 Թառամել էին...
 Կամեցայ լըսել թրուշնոյ երգեր,—
 Բայց թըռել էին...
 Նոր կոկոններին ջուր սըրըսկեցի,—
 Զըբացւան բընաւ..
 Փոքրիկ մանուկին երբ փայփայեցի,—
 «Թող»—ասեց, փախաւ...
 Մի աղջիկ տեսայ—խոստացայ սիրել,—
 Ուրիշին սիրեց...
 «Լուսին», կանչեցի—ցաւերս սփոփել,—
 Ամպումը ծածկեց... .



ՄՈՌԱՅԵԾ ՏԵՃԵՐ.

(Լըդովից.)

Կար մի ժամանակ տաճար այս վայրին—
Այժմ քարուքանդ ու խոտով բուսած...
Ապերախտ յետնորդք մահու յանձնեցին—
Խաւարում, փոշում—սրբութիւնն նախնեաց:
Եւ Հիմայ այնտեղ ուր Հիմն էր երեւում,
Երկինք բարձրանում կընդրուկ քաղցրագին,
Ուր քրմապետը ծիրանի զգեստում
Զոհ էր մատուցում անյայտ Արարչին...
Այնտեղ կովեր են այժմ արածում,
Լրսում է հարւած կոշտ խարաղանից.
Եւ ինչոր արցունք ցամաքած աղբրում
Երբեմն հազիւ կաթում է ակնից...

ԱՆԴՐԷԵՒԻՑ.

Ըսպատում եմ անհամբեր ես, երբ կըմբռնի արեգակ,
Արեւելքից կըտարածւի զովացուցիչ մոլթն արագ,
Գետի վերայ խեղճ ձըկնորսի առագաստը կըփռուի
Եւ հանգարտած փողոցներում խուլ աղմուկը կըլըռի...
Այն ժամ պիտի իսկոյն փակւեմ իմ անկիւնում

անվերդով,—

Բուժեմ սիրտըս, վերաւորւած կոշտ ու կոպիտ ձեռքերով,
Պիտի վառւեմ մոմ իմ Տիրոջ սուրբ պատկերի առաջին
Եւ աղօթեմ ոգեւորւած, որ տայ հանգիստ իմ մըտքին...
Բոլոր զըրկանք ու անարգանք—այդ բոլորը պիտ' ներեմ,
Այն ժամ բախտ ու խաղաղութիւն անշուշտ իմ մէջ

կըզրանեմ:

Առաւօտեան ես դուրս կ'ելնեմ մարդկանց մօտը պարզ
դէմքով—

Ու կըմեկնեմ ձեռքս նոցա, ինչպէս եղբարց, ժպտելով,
Եւ կ'ասեմ ես.—«մոռանանք շուտ երեկուանը, ընկերներ,
«Սիրենք իրար, պատճառ Տէրը ինձ պարգեւեց մի նոր սէր»

	ԵՐԵՎ.
Ֆետոգորովից	5
Էստօնական առասպել	6
Նէկրասովից	14
Լեոնցու հայ աղջկայ երգը	15
Աղօթք ամենքի համար	17
«Նաւակի» (միայն) հեղինակին—Լ. Ման-ին	22
Հէյնէից	24
Մանկական պատերազմ	25
Նաղսօնից	33
Ինչպէս ձամբորդը	35
Հէյնէից	36
Կտակ	37
Իմ երգը	38
Գեղջկուհու խոստովանանքը	39
Հէյնէից	43
Էջը և փալանը	44
Լերմօնտովից	47
Աստի ինձ, ինչհու	48
Նաղսօնից	50
Անպտուղ երկունք	51
Հէյնէից	53
Հայու Մեծերը	54
Նաղսօնից	57
Մի փշրանք «Այն երազ չէ» պատկերից	58
Հէյնէից	64
Գիտես հոգ եմ	65
Մուգային	67
Մենք կուտւմ ենք	68

Մարտովից	72
Էն, սա էլ իմ սէրը	73
Հէյնէից	75
Հանելուկ.	76
Կօզլովից.	78
Վահագնայ ծնունդը	79
Նաղսօնից.	82
Մուգային.	83
Հէյնէից	84
Մեր չինովնիկի «եթէ»-ները.	85
Հէյնէից	88
Մկների ապստամբութիւնը.	89
Նաղսօնից.	94
Աշուղի «նէյնիմ»-ներից.	95
Սօկոլովից.	96
Պօէտի կողմից	98
Նւէր Գ. Սրժբուն.	100
Մարտովից	101
Նոր լիւրեր Տաճկահայաստանից	102
Աշուղի «նէյնիմ»-ներից	105
Օսար պօէտին	108
Թոշնակի մայր.	111
Աւարայր դաշտը կուի նախընթաց գիշերը	113
Խնդիր գիշերից	120
Մանուկին.	121
Աշուղի «նէյնիմ»-ներից	123
Մոռացած տաճար.	124
Անդրէսովից	125



19 APR 2013

6577

ՀՀ Ազգային գրադարան



NL0579868

